

# ថ្ងៃខែក្នុង

2016 | កញ្ចប់សម្រាប់ | DECEMBER | DÉCEMBRE

horizon





MARCHÉ

# ADONIS

Un univers de fraîcheur

Les saveurs de la méditerranée...  
*le bon goût du partage !*



Centre-ville Montréal - Griffintown - Montréal - Laval - Laval Est - Brossard  
Dollard-des-Ormeaux - St-Laurent - Anjou  
Mississauga - Scarborough

[www.groupeadonis.ca](http://www.groupeadonis.ca) | Suivez nous !





# ARZ

## fine foods

the essence of mediterranean gourmet

For Our Store Location, Hours, & Promotions Please Visit Our Website  
[arzfinefoods.com](http://arzfinefoods.com)

**MERRY  
CHRISTMAS**

& Happy New Year



We Are Now Available  
At Selected  
Loblaws, Superstore,  
Fortinos, Wholesale  
club & Nofrills  
Stores






# Crown Pastries

Fine Middle Eastern Pastries

#1 Baklava in Toronto



**OPEN DAILY**

Monday to Sunday from 9 a.m. to 10 p.m.



BEINNAREN



ESH AL ASHFOUR



BAKLOVA



MAMMOUL



SWEET CHEESE

Specializing in pistachio, cashew, almond, walnut, and hazelnut baklava & other regional pastries and sweets. Everything is hand-made from scratch, using the finest ingredients and prepared fresh daily.



Call (647) 351-2015

2086 Lawrence Ave. East | Scarborough, ON

[www.crownpastriesbaklava.com](http://www.crownpastriesbaklava.com)

Enjoy our sweets delivered free straight to your home in Scarborough, with a minimum order of \$50.

## ՄԵՐ ԽՈՍՔԸ

«Հորիզոն»ի տասնվեցերորդ բացառիկը ընթերցողին կը ներկայանայ վերստին նիւթերու բազմազանութեամբ: «Հորիզոն»ի այս տարուան բացառիկի կողքը կը ներկայացնէ Արցախի Ալղիլեան քառօրեայ պատերազմի բովէն անցած խրոխտ հայ սահմանապահ զինուորը:

Այս թիւի առաջնորդող յօդուածի հեղինակ փորձագէտը լուսարձակի տակ կ'առնէ հայ ժողովուրդի անցած ճանապարհը եւ քաղաքական արժեւորումը կը կատարէ Հայաստանի նորանկախ հանրապետութեան 25-ամեայ քաղաքական ուղիին:

Յատուկ յօդուածներով կը ներկայացուին Արցախեան քառօրեայ պատերազմի նահատակ զինուորներուն պատմութիւնները:

Բացառիկի այս թիւի հայերէն հատուածի էջերով ընթերցողին ուշադրութեան կը յանձնուի դրաւեալ Արեւմտահայաստանի մէջ հասակ առած դաւանափոխ հայերու նոր սերունդի ապրումներն ու խոհերը: Յա-

չորդող յօդուածներով կը ներկայացուին հայ արուեստի բնագաւառի ներկայացուցիչներու հետ «Հորիզոն»ի կատարած հարցագրոյցներու շարքը:

Բացառիկի անգլերէն հատուածը այս թիւով կ'անդրադառնայ «Հորիզոն»ի Արցախեան արեւելեան դիրքերու յատուկ առաքելութեան եւ անոր ընդմէջէն կը ներկայացուին հայրենի հողի պաշտպաններու սիրագործութիւնները: Յատուկ յօդուածներով կը ներկայացուին Դիլիջանի միջազգային գոլէճի պատմութիւնն ու սփիւռքահայերու ներգործմը Հայաստանի գինեգործութեան մարզին մէջ:

Գանատայի ՀՅԴ կառոյցի պատանեկան եւ երիտասարդական կազմակերպութիւններու հայրենիքի մէջ գործունէութեան մասին յատուկ անդրադառով կ'անդրադառնան երկու յօդուածները: Ֆրանսերէն լեզուով կը ներկայացուի իսլամացած հայերու մասին նոր հրատարակութեան մը գրախօսականը:

«Հորիզոն»

### Բովանդակութիւն - Contents - Sommaire

- Համակարգային միւս փոփոխութիւնը, էջ 4
- Խ. Տէր Ղուկասեան  
Արցախի հերոս Ռոպերթ Ապաձեանի, կերտած ժամանակը, էջ 8
- Լուսինէ Աբրահամեան  
Արցախեան Քառօրեայ պատերազմի նահատակատները, էջ 16
- Արմինէ Նարինեան  
Գէորգ Զաւուշի տունը Սասնոյ մէջ, էջ 18
- Սոֆիա Յակոբեան  
Մենք այստեղ ենք, ամէն մի զինուորի կողքին, էջ 23
- Արմինէ Նարինեան  
Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը ընկ. Ռաֆֆի Տօնապետեանի հետ, էջ 26
- Հարցազրոյց «Հորիզոն»ի  
«Իմ երաժտութեան գիրքում միշտ հայկականն է, որովհետեւ դրանք իմ արմատներն են». Սիրուչօ, էջ 30
- Վահագն Գարագաշեան  
Հարցազրոյց պղսահայ երդահան Մաժակ Թօշկեանի հետ, էջ 34
- Սոնա Թիթիզեան-Կէտիկեան  
Հարցազրոյց թրքագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Մելինէ Անումեանի հետ, էջ 42
- Վահագն Գարագաշեան  
Արցախեան քառօրեայ պատերազմը լուսանկարներով, էջ 47
- Արմէն Երամիշեան

- Innovations in Education: Breaking borders and boundaries in Dilijan, page 54  
*By Paula Der Matoian*
- 6,100 Years of Vinicultural History, Putting Armenia on the Map Once Again, page 60  
*By Paula Der Matoian*
- Canadian and Anchored to your Roots, page 66  
*By Arevig Afarian*
- Tebi Yergir, page 70  
*By Talar Poladian*
- AYF Canada Camp Vanadzor: A Brighter Tomorrow, page 72  
*By Talia Bachekjian*
- My Beloved Artsakh, page 76  
*By Nora Markarian Yacoubian*
- An American Researcher of Ancient Armenian Manuscripts, page 82  
*By Sosy Mishoyan Dabaghian*
- An interview with Armenian Ambassador to Canada Armen Yeganian, page 86  
*By Vahagn Karakachian*
- The Odar, page 92  
*By Tvine Donabedian*
- À la recherche du Hay perdu  
Récits de silence et de discrimination chez les Arméniens cachés de Turquie, page 95  
*Par Astghik Aprahamian*

# Համակարգային միևնույնութիւնը

Հայոց ցեղասպանութեան հարիւրեռորդ տարեկիցը նշող 2015 թուականը ազգային յառաջնութացի բազմաթիւ դրական նախանշնաններ տուաւ: Չորս տարի առաջ սկսած գործընթացը՝ համաշխարհային մասնավոր նշելու այդ խորհրդանշական թուականը եւ ընդմիշտ փակելու հայ-թրքական փրոֆերուներուն տիտուր էջը, լիովին արդարացաւ Հայաստանի թէ Սփիւռքեան տարբեր համայնքներու մէջ միջազգային լայն արձագանգ գտած նախաձեռնութիւններով: Հակառակ որ թրքական ժխտողականութիւնը փորձեց նսեմացնել համահայկական զօրաշարժը ապրիլեան բախտորոշ օրերուն իսկ մարդկութեան հաւաքական յիշողութիւնը ապակողմնորոշելու եւ աղաւաղելու կոչուած հակա-նախաձեռնութիւններով եւ յայտարարութիւններով, Յեղասպանութեան միջազգային իրողական եւ իրաւական ճանաչումը հարցականի տակ չէր դրուեր: Հարիւրեռորդ տարեկիցի ձեռնարկներուն սկիզբ տուող համահայկական յայտարարութիւնը, զոր Ծիծեռնակաբերդի մէջ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսիսեան ընթերցեց Յունուուար 19, 2015ին, ի լուր աշխարհի կը հաստատէր պահանջատիրութեան արդարահատոյցի հանգրուանին պաշտօնական սկիզբը: Թէեւ Միացեալ նահանգներու մէջ ծայր առած դատական գործերը, Սիսի կաթողիկոսութեան վերադարձի դիմումը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի նախաձեռնութեամբ պատրաստուած ուսումնասիրութիւնը փաստացի իրողութիւններ էին, որ արդարահատոյցի ուղղութեամբ աշխատանքներ արդէն կը ծաւալէին, այս յայտարարութեամբ պետութիւնն էր որ, վերջապէս, յանձնառութիւն կը վերցնէր արտաքին քաղաքականութեան մարզէն ներս բարդ եւ ուսկային այս մարտահրաւէրը դիմագրաւելու: Տակաւին, կը սպասուէր, որ հարիւրեռորդ տարեկիցի համահայկական յանձնաժողովը վերածուէր մնայուն խորհուրդի, որով եւ Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը մէկ քայլ առաջ կ'երթար ուազմագարական հայեցակարգի մը առաջազման ուղղութեամբ:

Քառորդ դար անկախութեան տարեղարձը անցնող տարուան ընթացքին սակայն այլ իրականութեան զէմ յանդիման դրաւ հայութիւնը։ Նախ Ապրիլեան քատօրեայ պատերազմը, ապա Յուլիսեան խոփութիւնները եւ Սեպտեմբերին կառավարութեան փոփոխութիւնը եկան ոչ միայն նախորդ տարուան լաւատեսութիւնը խախտելու, այլ ծնունդ տուին նոր մտահոգութիւններու՝ Հայաստանի եւ, ընդհանրապէս, հայ ժողովուրդի ապագային մասին։

2017 թուականը յշի կը թուի ըլլալ միջազգային վերի-վայրումներով, որոնց նախանշանները յստակօրէն տրուեցան նախորդ տարուան ընթացքին։ Անոնց կարգին՝ Միջին Արեւելքի մէջ ոռու-թրքական արագ մէրձնեցումը, Պրեզդիթը (Brexit), Միացեալ Նահանգներու մէջ Տոնալտ Թրամփի անբաղաձալի, բայց ոչ այնքան անակնկալ ընտրութիւնը։ Այս ըոլոր իրադարձութիւններու փոխկապակցութիւնը բնականաբար մեկնաբանութիւն է միայն եւ ոչ անպայմանօրէն պատճառ-արդիւնքի իրողութիւն։ Աւելի՛ն, միջազգային գանգուածային միջոցներուն մէջ ընդհանրապէս բացասականօրէն ընկալուած այս իրադարձութիւնները, որոնք կը նան

դանդաղեցնել եթէ ոչ առկախել պար պատերազմի աւարտով արագընթաց զարգացող համաշխարհայնացումը, ունին ոչ միայն բանական բացատրութիւն, այլ բարացուցական են հակահամաշխարհայնացման գորավիր մարդկային հսկայական զանգուածներու գոյութեան իրողութեան: Այլ խօսքով՝ մտահոգիչ հեռանկարներով յղի այս երեւոյթները աւելի են քան քիչ մտածուած ու արհամարհականորէն անոնց հասցէին նետուած «պոպուլիզմ»ի անհամոզիչ բացատրութիւնը: Նոյն տրամաբանութեամբ կարելի է ըսել, թէ անոնցմէն ոչ մէկը, բացի, հասկնալիօրէն, ուսու-թրքական մերձեցումը, իր անմիջական ազգեցութիւնը պիտի ունենայ Հայաստանի արտաքին թէ ներքին քաղաքական գործընթացին վրայ: Սակայն կարելի չէ երկող տարուան խորհրդարանական այնքան կարեւոր ընտրութիւններուն մասին մտածել բոլորովին անտեսելով միջազգային ոլորտին մէջ վերիվայրումներու, անակնկալներու եւ մինչեւ իսկ վտանգաւոր ցնցումներու առկայութիւնը:

Հայաստանի մէջ Ապրիլեան պատերազմի եւ Յուլիսեան դէպքերու առթած մտահոգութիւնները բացայայտ դարձան նաեւ Սփիւռքի մէջ, ուր եթէ մէկ կողմէ քաորեայ պատերազմին հակազդեցութիւնը ծնունդ տուալ հակազդերիական հանրածանօթ զօրաշարժին, Յուլիսեան խռովութիւններուն ընթացքին իշխանութիւններուն հակազդեցութիւնը առաջացուց թերեւս նախընթաց չունեցող ընդգործմի եւ բողոքի արտայայտութիւններ, որոնք թէկուզ եւ դեռեւս սաղմային քաղաքացիական նախաձեռնութիւններու վերածուելու սկսան։ Խօսքը կը վերաբերի յատկապէս Հայաստանի մէջ 2017-ի ընտրութիւններու ազատ եւ արդար կայացման վերահսկումի ծրագրին, որ միջազգային հանրածանօթ հայ դէմքերու աշխոյժ զօրակցութիւնը կը վայելէ։ Միեւնոյն սաղմային իրավիճակին մէջ են նաեւ ընդհանրապէս համալսարանական ամպիոններու թէ հիմնարկներու նախաձեռնութեամբ Հայաստանի ներքաղաքական գործընթացին մասին հրապարակային քննարկում-բանավէճերը։ Թէ այս նախաձեռնութիւններէն ոմանք քաղաքական յատուկ օրակարգ ունենան, անոնց մասնակիցները, սփիւռքեան թէ հայրենի մտաւորական, հասարակական եւ քաղաքական դերակատարներ, սեփական շահեր հետապնդեն, թէ բանավէճերու ընթացքին հնչող առաջարկները երբեմն ծիծաղելիօրէն պարզամիտ ու յաւակնոտ ըլլան՝ այնքան ալ կարեւոր չէ, որքան այն ինչ այս նորատեսակ զօրաշարժը երեւան կը հանէ. Հայաստան-Սփիւռք համագործակցութեան հայեցակարգի մը բացակայութիւնը։

Արդարեւ, բացառելով արցախեան ճակատին վրայ լայ-  
նամասչտապ պատերազմի մը բռնկումը, կասկած չկայ, որ  
2017-ի խորհրդարանական ընտրութիւնները եկող տարրուան  
ընթացքին հայրենի իրականութեան մէջ ամենէն կարեւոր  
իրադարձութիւնն են: Այդ ընտրութիւններն են, որ պիտի  
նախապատրաստեն 2018-ին համար նախատեսուած սահմա-  
նադրական փոփոխութիւնը, ընդ որում Հայաստանը պիտի  
վերածուի խորհրդարանական կառավարական համակարգի:  
Առանց Ապրիլեան քաօրեայ պատերազմին եւ Յուլիսեան  
դէպերուն Սփիւռքի համար խորհրդարանական եկող ընտ-  
րութիւնները հաւանաբար ըլլային նոյնքան անկարեւոր, որ-

Այս էջը կը հովանալութե՛ Melbourne-ի «Գլոբալար» հայտը



BARRY



KAREN



GARO

# KAZANDJIAN



METTRE NOS CLIENTS EN PREMIER  
NOUS CLASSE AUSSI PARMI LES PREMIERS

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

# RÉSULTATS

ÉQUIPE KAZANDJIAN  
.com

514

**333-3000**

KAZANDJIAN REALTY  
.com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | FRANCHISE INDÉPENDANT ET AUTONOME DE RE/MAX QUÉBEC

քան եղած են նախկին բոլոր ընտրութիւնները, ներառեալ վերջին Տեղական հնքնակառավարման Մարմիններու քուէ-արկութիւնը, որ, ենթադրաբար, ընթացքի մէջ եղող համակարգային փոփոխութեան ազդանշանը պիտի տար: Նման ազդանշան եթէ եղաւ շատ աւելի շարունակականութեան փաստ եղաւ, թէկուզ եւ, ըստ երեւոյթին, ընտրութեան մաքուր, ազատ եւ թափանցիկ ըլլալու իրողութիւնը կասկածի տակ չի գրուիր: Բայց Հայաստանի երկրորդ եւ երրորդ ամենակարեւոր քաղաքներուն՝ Կիւմրիի եւ Վանաձորի մէջ ընտրուեցան համակարգի շարունակականութեան փաստը տուող թեկնածուները...

Ճիշդ է, ՏիՄ-ի ընտրութիւններուն սփիւռքեան հետաքրութիւն փնտուելը պարզամտութիւն է: Բայց հարցը ազդանշաններու («սիկնալ»՝ գործածելու համար հայրենի «կլոպալացած» քաղաքական բառապաշարի վերջին նորոյթը դարձած բառը...) մեկնաբանութիւնն է եւ անոնց անդրադրձը: Աւելի՞ն, թէ ինչպէ՞ս պիտի կազմակերպուի սփիւռքեան վերահսկողութիւնը խորհրդարանական ընտրութիւններուն ինքնին առանձին խնդիր է, եւ աւելի հարցական է նախաձենութեան անդրադրձը նոյնինքն ընտրական գործնական վրայ: Այլ խօսքով՝ այդ ընտրութիւններուն արդիւնքով համակարգային փոփոխութիւնը թէ շարունակական նութիւնը կախում պիտի ունենայ բացառաբար ներհայաստանեան ազդակներէ եւ ոչ թէ Սփիւռքի վերահսկողութենէն: Այդուհանդերձ, ոչ ոք իրաւունք ունի կասկածելու թէ եւ Յուլիսեան դէպքերէն յետոյ Սփիւռքէն բարձրացած քննադատական ձայներու, եւ խորհրդարանական ընտրութիւններուն վերահսկողական առաքելութեամբ մասնակցելու որոշման անկեղծութեան եւ բարոյականութեան վրայ:

Բայց սփիւռքեան մասնակցութիւնը Հայաստանեան ներքաղաքական ոլորտին ընտրական գործընթացի մաքրութեան, ազատութեան եւ թափանցիկութեան ջատագով եւ պաշտպան ըլլալէ անդին պէտք է մտածուի: Երկու փոխլրացուցիչ նախաձենութիւններ կրնան այդ մէկը իրականացնել: Անոնցմէ առաջինը Հայաստան-Սփիւռք համագործակցութեան հայեցակարգի պատրաստութիւնն է, երկրորդը՝ Ազգային ժողովին ներս սփիւռքեան ներկայացուցչութեան առաջացումը: Ասոնցմէ ոչ մէկը կ'ենթադրէ Հայաստան-Սփիւռք կապերու զարգացման ուղիին վրայ հիմնական յառաջընթաց հանդիսացած Սփիւռքի նախարարութեան չէզոքացումը: Ընդհակառակը, կը հաստատէ անոր գերակատարութեան լայնացման անհրաժեշտութիւնը՝ ներառելու համար մինչեւ իսկ գեսպանատուններէն ներս բաժանմունքներու ստեղծումը: Անշուշտ որ նման նախաձենութիւններու ֆինանսաւորումը Հայաստանի պետական պիտուծին վրայ բեռ չի կրնար ըլլալ: Հայաստան-Սփիւռք համագործակցութեան հայեցակարգի թերեւս առաջնակարգ խնդիրը պէտք է ըլլայ նման առաքելութիւններու ֆինանսաւորումը:

Երկու նախաձենութիւններն ալ իրենց կարգին սփիւռքեան համայնքներէն ներս նոր աշխուժութիւն պիտի առաջացնեն եւ կրնան մինչեւ իսկ երիտասարդ սերունդներուն համար հայանուէր գործի նոր ասպարէզներ բանալ: Հայաստան-Սփիւռք համագործակցութեան հայեցակարգը, մէկ խօսքով, եւ պիտի ամրագրէ համագործակցութեան ուազմափարական բնոյթը, եւ պիտի մասնագիտացնէ յարաբերութիւնը: Ինչ կը վերաբերի Ազգային ժողովին ներս սփիւռքեան ներկայացուցչական բաժանմունքի մը առաջացման՝



անոր նպատակը Հայաստանի մէջ սփիւռքեան շահեր ներկայացնելը չէ, այլ՝ հայաստանեան ներքաղաքական ոլորտին հետ ուղղակի առնչումը: Սփիւռքեան շահեր հասկացողութիւնը ոչ միայն իմաստ չունի, այլ կրնայ մինչեւ իսկ վտանգաւոր թուլիլ: Զկան սփիւռքեան շահեր, կան ազգային շահեր, որոնք կը ներառեն, պէտք է ներառեն, անհրաժեշտաբար նաև Սփիւռքի մտահոգութիւնները, կարիքները եւ պահանջները:

Հայաստանի մէջ համակարգային փոփոխութեան հեռանկարը լուսանցքի վրայ ձգած է սփիւռքեան երեւոյթը, չէ ընկալած այն որպէս ազգային շահերու մէկ անբաժան մասնիկ: Այս մէկը չի նշանակեր, որ Սփիւռքը անտեսուած է: Ընդհակառակը, սփիւռքեան ազդակի յաւելեալ ներգրաւման առաջարկի բանաձենումը խարսխուած է Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու որակական զարգացման համոզումին վրայ, ի մասնաւորի Սփիւռքի նախարարութեան ստեղծումէն ի վեր: Այդուհանդերձ, չենք կրնար լուռ անցնի համահայկական խորհրդագի չստեղծման, նոր սահմանադրութեան մէջ Սփիւռքին շատ սահմանափակ տեղի եւ Յուլիսեան դէպքերէն յետոյ պետութեան ամենաբարձր մակարդակէն կատարուած մտահոգիչ բանաձենումներուն վրայէն: Թէ նոր կառավարութեան ճիգերը որքանո՞վ պիտի արդարացուին համակարգային փոփոխութիւններու ուղղութեամբ նախքան խորհրդարանական վարչակարգի անցումը, թէ ի՞նչ պիտի ըլլան խորհրդարանական ընտրութիւններուն արդիւնքները 2017ին, եւ անոնց հետեւութեամբ Սերժ Սարգսեանի ո՞րմէկ խոստումը (2018-ին իշխանութենէ հեռանլու, թէ՝ Հանրապետականներու խորհրդարանական բայցարձակ մեծամասնութեան շարունակման պարագային վարչապետի պաշտօնին առաջարկումի կարելիութիւնը նկատի ունենալու) պիտի յարգուի՝ դեռ կանուի է այ բոլոր հարցումներուն պատասխան գտնելու համար:

Մէկ բան յստակ է՝ անհրաժեշտ է համակարգային այլ փոփոխութիւն մը Սփիւռքը լուսանցքային իրավիճակէն դուրս բերելու եւ հիմնարկային (institutional) կարգավիճակի մէջ դնելու իմաստով:

Խ. Տեր Ղուկասեան

*Կայս Էջ կը հովանաւորեմ ԱՌ. և ԱՌ. Պահապան և Կայութի Շամիլիան*



Giardini Segreti

# PASQUALE BRUNI



BERANI  
TORONTO

# Արցախի հերոս Ռոպերթ Ապաճեանի կերտած ժամանակը

«Վերջին նոռակի օղակն արդէն հանել ու պատրաստ սպասում եմ՝ հենց մօտենան, ինձ հետ միասին պայթեցնելու եմ: Մենք այս դիրքը արիւնով պահեցինք, ով յանձնի այն, ես նրա...»: Այս խօսքերն ու յաջորդող սխրանքը, որի մեծութիւնը հնարաւոր չէ ոչնչով չափել, 19-ամեայ տարիքում Հայոց բանակի զինուոր Ռոպերթ Ապաձեանի նոր ու յաւերժական կեանքի սկիզբը դարձան:

Կեանք, որը պատուել էր Երեւանի Մոնումենտ կոչուղ (ինչպէս ժողովուրդն է ասում) թաղամասի տներից մէկում, որտեղ 2016 թուականի Ապրիլի 2-ից ժամանակը կանգ է առել: Այդ տանն այլեւս մի նոր ժամանակով են ապրում՝ Արցախի հերոս Ռոպեկը Ապաձեանի ժամանակով, որի զարկերը՝ ցաւի ու հպարտութեան, այսօր իր մէջ կրում է իւրաքանչիւր հայ:

Այդ տունն էլի առաջուանն է՝ նոյն փողոցը, բակը, նոյն հասցեն, միայն Նա չկայ՝ իր կենսախինդ իշառնուածքով, ծիծաղով ու իր Փիզիքական ներկայութեամբ։ Նա հիմա հերոս է՝ Արցախի հերոս, լեկենտ ու պատմութիւն ու «ապրում» է, որպէսզի մենք շարունակենք ապրել։

«Այս տանն է ծնուել, մեծացել, այս տանից է դպրոց գնացել, ուսումնարան, բանակ ու... Հիմա նա չկայ: Ամէն ինչում առաջինը պիտի լինէր, պէտք է աչքի ընկնէր իր գործողութիւններով, խառնուածքն էր այլպիսին, այլ կերպ չէր կարող: Նրա մասին բոլոր յիշողութիւններն ուրախ են, միակ տփուր յիշողութիւնն այն է, որ այլեւս չկայ», - արցունքները մի կերպ ենեղեկով՝ պատմում է Ռոպերթի տատիկը՝ Անահիտ Գէրոգեանը, որը ոռուաց լեզուի եւ գրականութեան ուսուցչուհի է:

Կնոջը «օգնութեան» է գալիս ամուսինը՝ Ռոպերթի պապիկը՝ Գէորգ Ալպածեանը. «Զարմանալի բնաւորութիւն

ունէր, ամէն ինչ պէտք է համով անէր, հումորով: Մնուած օրից էր այդպիսին: Մշշտ ասում եմ՝ նրա վերջին արարքն իր խառնուածքի թելադրանքն էր, չցանկացաւ ընկերներին մենակ թողնել, իրեն յանձնարարուած գործը կիսատ թողնել, լքել գիրքը: Անգամ վերջին պաշին էլ «աչքի ընկաւ»: Առաջ էլ շատ մեծ շրջապատ ունէր, շատերն էին նրան ճանաչում, իսկ հիմա նրան բոլոր գիտեն»:

«Եթէ այդպիսին չլինէր, առանց վարանելու կը փորձէր իրեն փրկել, այլ ոչ թէ կը սպասէր ու միայնակ մինչեւ առաւտեան ժամը 7-ը կը կուռէր: Վերջին երկու ժամը մենակ է մնացել, վիրաւոր վիճակում անդամ կարողացել է իր ընկերո- ջը՝ Անդրանիկ Զոհրապեանին, որը նոյնպէս վիրաւոր էր, մօ- տակայ խրամատից բերել, որ իր կողքին լինի, ու երբ թիկուն- քից հասնեն օգնութեան, թշնամուն գերի չմնայ: Ոչ միայն կոռւել է, կապի մէջ եղել հրամանատարների հետ ու տեղեկու- թիւններ փոխանցել, այլեւ վիրաւոր ընկերոջ մասին է մտա- ծել, որը, սակայն, արիւնաքամ է եղել: Միշտ էր այդպիսին, երբեք ընկերոջը մենակ չէր թողնի: Դպրոցում գալիս էր՝ տա- տի, ինդիր կայ՝ պիտի գնամ: Ստիպուած թողնում էի, որով- հետեւ գիտէի, որ միեւնոյնն է՝ գնալու է, գոնէ այս կերպ տեղեակ կը լինենք, թէ ո՛ւր է գնում: Զանգում էի տուն, մօրն ասում՝ Աննա, ուշագիր կը լինես, Ռոպերթն այսինչ տեղն է գնացել: Հարսս թէ՝ մա՛մ, թողնում ես, որ գնա, յետոյ էլ ասում ես՝ ուշագիր կը լինես»,՝ պատմում է տատիկը՝ կարծես ցանկանալով մոռանալ այն ցաւը, որը Ռոպերթն է զգացել վերջին պահին:

«Անդրանիկի հայրն ասում է՝ Ռոպերթն ինձ համար հերոս է միայն նրա համար, որ իմ տղային չի թողել, որ թշնամուն գերի ընկնիք: Ասում է՝ գոնէ Ռոպերթը կենդանի մնար եւ ասէր, թէ որո՞նք են եղել որդուս վերջին բառերը: Մահացած վիճակում ատրպէյճանցիները Ռոպերթին ու Անդրանիկին փորձել են գերի տանել, սակայն ճանապարհի կէսին թողել են: Այդ պատճառով է, որ միայն Ապրիլի 8-ին են նրանց մարմինները կարմիր խաչի օգնութեամբ հայկական կողմին յանձնել...», - կիսատ է թողնում խօսքը պատճիկն ու մօտենում պատռհանին ծխախոտի հերթական գլանակը վառելու: Տափէրը շարունակում է. «Երբ պատերազմի առաջին օրերին հեռուստաեսութեամբ ասում էին, որ Արմենակ Ուրֆանեանն իրեն նոնակով պայթեցրել է, ինքս ինձ ասում էի՞ն սիրուն տղան, ոնց է նման բան արել, 24-25 տարեկան տղան ինչպէ՞ս է ինքնիրեն նոնակով պայթեցրել: Ի՞նչ իմանայի, որ իրականում դա Ռոպերթն է եղել, որ գիմա մտածում եմ... Մենք նրա մասին լուր չունեինք եւ յոյս ունեինք, որ կենդանի է»:


Ուսպերթի մահուան մասին հարազատները իմացել են առաջին իսկ օրերին, սակայն ծնողներին, տատիկին ու պապիկին ոչինչ չեն ասել։ Յայտնել են միայն մարմինը գտնելուց յետոյ։

«Իմացանք միայն Ապրիլի 8-ին. մարդիկ էին եկել, բերել էին Հայաստանի դրօշն ու մետաղը... Տիուր, տիուր կեանք: Ապրիլի 1-ին զանգել էր հայրենիկի ծնունդն էր շնոր-

Այս էոր կը հովանառութե Մամուկի, Թայքի, Գյորգի, Անդրեա և Պայտիկ Ռեստուար

# KOHAR

All Time Armenian Favorites



## LIVE IN CONCERT SOUTH AMERICA TOUR 2012 URUGUAY - ARGENTINE - BRAZIL

Full HD live recording of Argentine concerts with 80 songs, interactive & bilingual menu, subtitles in Armenian and in transliteration, as well as a 125-page songbook.

The bonus DVD includes excerpts from the Uruguay and Brazil concerts and behind-the-scene footage.

The latest DVD box comes to complement your music library with yet another fine production to cherish a lifetime.



[www.koharconcert.com](http://www.koharconcert.com)



Photo: A. H. G.



**Հաւորել:** Հօր հետ շատ կապուած էր, հայրն իր աշխարհն էր, իր կենաքը, ձգտում էր նրա նման լինել՝ ուժեղ, բոլորին հասնող: Ասում էր՝ պապայի նման պիտի վառուեմ: Տղաս փոքր տարիքում վառուել էր եւ ինոր այրուածքներ ունէր: Անգամ մանկապարտէզում էր այդ մասին պատմել: Դաստիարակչուհին մօրն ասել էր, որ զգոյշ կը լինէք, յանկարծ իրեն չվնասի: Բոլորին հասնող, օգնող երեխայ էր: Շատ ժամանակ չէր սպասում, որ դիմէքն, ինքն էր ոգութիւնն առաջ կը դարձար առաջ էր:

«Ամբողջ օրը վազքի մէջ էր՝ հեռախօսը ականջին: Զանգում էր՝ Ռոպերթ ո՞ւր ես, թէ՝ գործեր կան, պապի, հիմա կը գամ: Անընդհատ շտապում էր, կարծես ժամանակը նրան չէր բաւականացնում, ամէն ինչ վազքով էր անում: Ոչ մի

բանի նկատմամբ անտարբեր չէր, պէտք է խառնուէր անգամ իրեն չվերաբերող գործերին: Ում ի՞նչ հեռախօսահամար պէտք լինէր, Ռոպերթից էին ճշդում: Նրա մասին պատմութիւններն անվերջ են, ամէն օր մի նոր բան ենք իմանում նրա մասին: Զարմանում ենք, որ 19 տարեկան տղան ոնց այդքան բան հասցրեց, այդքան հետք թողեց», - յիշում է պապիկը:

Այդ պահին սենեակ է մտնում մի կապուտաչեայ փոքրիկ ու փորձում իր լուսաւոր ներկայութեամբ ցրել սենեակում թեւածող ծանր ու լուսաւոր տիրութիւնը: «Լաւ է, որ Աստուած մեզ երկու տարի առաջ մի նոր թոռնիկ պարգևեց, որն այդ ծանր օրերին մեզ զբաղեցրեց, այլապէս խելագարուել կարելի էր: Ռոպերթի հօրեղոր տղան է, պապիկի անունն ենք դրել՝ Գէորգ: Ռոպերթին այնքան է նման, որ մեզ յաճախ թւում է, որ մի Ռոպերթիկ էլ՝ անվախ, չարաճճի, սա է մեծանում: Ոչ մի բանից վախ չունի, մթութեան մէջ անգամ կ'իջնի բակ», - թոռնիկին գրկելով ասում է տատիկն ու յաւելում, որ Ռոպերթը երեխաներ շատ էր սիրում:

«Տղաս մի ընկեր ունի, կինը երիտասարդ տարիքում մահցաւ: Փոքր որդին շատ ծանր էր տանում մօր մահը, գաղաքել էր խօսել: Ռոպերթը երբ իմացաւ, ասաց՝ մի քանի օր ինձ մօտ թողէք, ամէն ինչ կը կարգաւորեմ: Ռոպերթի հետ մի քանի օր շփուելուց յետոյ, այդ փոքրիկը նորից կեանքի վերադարձաւ: Հայրը տղայիս ասել էր՝ տղադ արեց մի բան, որը մենք չկարողացանք», - յիշում է արդէն Ռոպերթի պապիկն, իսկ Արտակ անունով ընտանիքի բարեկամը, որը նոյնացս միացել էր զրոյցին, չարունակում է. «5 տարեկան տղաս Ռոպերթի հետ շատ էր կապուած: Ռոպերթը բանակից միշտ զանգում էր, խօսում հետը: Թէեւ չի հասկանում, թէ ի՞նչ է կատարուել, յաճախ ինձ ասում է՝ պա՛պ, Կեամին կարօտել եմ, գնանք իրենց տուն: Զարմանում ենք, թէ համակարգչին մօտենալիս՝ ոնց է կարողանում Ռոպերթի նկարները գտնել ու նայել: Հեռախօսիս մէջ նրանց նկարները, վիտէներն ունեմ պահած, անգիր ասում է, թէ որտեղ են եղել, ինչ են արել: Ռոպերթը նաեւ ինձ համար էր իսկական եղբայր: Նա ընկոյզի մուրապայ շատ էր սիրում: Վերջին արձակուրդի ժամանակ եկաւ մեր տուն: Մի բանկայ ընկոյզի մուրապայ բացեցինք, կերաւ, ասաց՝ պահէք, մնացածը յաջորդ անգամ կը դամկութեմ: Այդ բանկան այդպէս էլ դեռ մեր սառնարանում է»:

Եթէ նախկինում Ռոպերթի Ապաճեանին գիտէին նրան ծանօթ բոլոր փոքրիկները, հիմա արդէն ճանաչում են բոլորը: Ոչ միայն ճանաչում են, այլև իրենց հերոսն են համարում: «Ռոպերթի եղբայրը՝ Ռուբէնը, մի օր ասաց. «Տատի՛, գիտե՞ս, փոքր երեխաները յաճախ ինձ տեսնելով՝ շշնջում են իրար ականջի, թէ՝ գիտե՞ս ով է, Ապաճեան Ռոպերթի եղբայրն է»: Վերջին էլ Ռուբէնի ընկերոջ քոյրը տղայ էր ունեցել, որին Ռոպերթի անունով են կոչել», - պատմում է տատիկը:

Ռոպերթին սիրում էին նաեւ նրան ճանաչող գրեթէ բոլոր աղջիկները, իսկ նա. «Արդեօք որեւէ մէկին սիրե՞լ է, գժուարանում եմ ասել, բայց անընդհատ սիրահարուած էր: 9-րդ դասարում իրենց զուգահեռ դասարան Ռուսաստանից մի աղջիկ էր եկել, հաւանել էր ու ձեռքը բունած ման էր գալիս: Յետոյ գա էլ անցաւ: Անընդհատ ուշադրութեան կենտրոնում էր, մի օր թխուածք էր բերել, ասաց՝ տատ, տես համով է, աղջիկներն են պատրաստել: Կամ՝ տատ գիտես, ուսումնարանի բոլոր աղջիկներն ինձ են սիրահարուած: Խօսել գիտէր, գրաւել, համով բալայ էր, ասող-խօսող, ժպտերես, ինչպէս

*Միշտ էք կը հովանաւորեն ԱՌ. և ԱՌ. Յակովը և Անահիկը Այլ Քաջարութեան*

2017  
**MDX**

Image for illustration purposes only.

**ACURA**  
**GABRIEL**  
WEST-ISLAND

4648, boul. St-Jean  
D.D.O., QC H9H 2A6  
**514 696-7777**  
[acuragabrielwestisland.com](http://acuragabrielwestisland.com)



◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian  
Cell. : 514 318-4115

For more information, visit Acura Gabriel West-Island

Image for illustration purposes only.

**HONDA**  
**GABRIEL**

◀ OPEN SATURDAYS ▶

7000, boulevard Henri-Bourassa E.  
Montréal-Nord, QC H1G 6C4  
**514 327-7777**  
[www.hondagabriel.com](http://hondagabriel.com)



Kevork Asadourian  
Cell. : 514 318-4115

For more information, visit Honda Gabriel

կարող էին նրա համար չխենթանալ», - հպարտութեամբ պատմում է տատիկը:

«Բանակից այստեղ հարցեր էր լուծում: Մի օր զանգեց՝ պապի, երկու թութակ կ'առնես, վանդակի մէջ կը դնես, կը դան կը տանեն: Բանակից էր ասել, ո՞նց չանես: Երբ ընկերը եկաւ տանելու, հարցրի՝ ո՞ւմ համար է, ասաց՝ չգիտեմ: Այդպէս էլ չիմացանք՝ ուր է տանում», - յիշում է պապիկը:

Ոոպերթ Ապաճեանի մասին պատմում են նաեւ նրա լուսանկարները, որնցից իւրաքանչիւրի հետ կապուած փոքրիկ պատմութիւնները տատկիկն անդիր է յիշում. «Շատ էր սիրում նկարուել, կարծես ամէն պահը փորձում էր յաւերժացնել: Նրա տատամնահասիկն է, բժշկական գործիք էր բռնել: Սա Մոսկուայում է նկարուել, տեսէք ոնց է քայլում: Իրենց կնունքի նկարն է, տեսնում էք նրա դժգոհ դեմքը: Քահանան ասաց, որ քաւորի ձեռք պէտք է համբուրես: Ոոպերթը թէ՝ ես համբուրեմ, չեմ համբուրի: Փորձեցինք բացատրել, որ դա ընդունուած կարգ է, օրէնք է, մի քիչ խաղաղուեց, բայց միայն շուրջերը հպեց ձեռքին: Այս նկարում էլ հարսանիքի ժամանակ գաշոյնով դուռ է պահել: Այդ օրը ուրախ-ուրախ եկաւ տուն ու տատ, 200 տոլար փող եմ աշխատել, կարգին քաւոր էր: Յաջորդ հարսանիքին տրամադրութիւնը բարձր չէր, 5 հազար դրամ էին տուել, ասաց՝ ահ, ժլատ քաւոր էր: Արանք բանակի նկարներն են: Տեսնում էք այս նկարում աւտոմատն ինչ դիրքով է պահել: Ասում էր՝ տատ, զիտես, ամէն մարդ չի կարող այսպէս պահել: Էհ, ամէն մարդ էլ, երեւի, չէր անի այն, ինչ նա արեց՝ մեզ թողնելով այս նկարներն ու անվերջ յիշողութիւններն իր մասին: Գնալր-գար՝ կը պահէր, ճիկեար էր, զանգում էր, թէ՝ տատ ջան, ո՞նց ես, ծառերը ծաղկե՞լ են, բակում ի՞նչ կայ, պապին ի՞նչ ա անում, հօ քեզ չեն նեղացնում, քոյրիկներին դրսում բան ասող կա՞յ. ամէն բան պիտի իմանար»:

«Եթէ նպատակ էր դնում, անում էր: Ուսումնարանից յետոյ ասաց՝ պիտի բարձրագոյն սովորեմ: Գնաց ինստիտուտ ընդունուեց, որ լաւ մասնագէտ դառնայ, բայց...

Շատ արագ անծանօթ մարդկանց հետ ընդհանուր լեզու էր գտնում: Մէկ էլ տեսնէիր, անծանօթ մէկին բերում էր եւ ասում պապի, բարեկամիդ եմ գտել, ծանօթացիր:

Սա Մարալիկից եմ, մեծ քոյրս, եղբօրս տղաներն այսօր էլ այնտեղ են ապրում: Միասին շատ էինք գնում Մարալիկ: Զարմանում էի, թէ ինչքան մարդ է նրան ճանաչում: Ասում էր՝ այ տղայ, քեզ աւելի շատ մարդ է ճանաչում, քան ինձ, որն այստեղ է ծնուել, մեծացել», - պատմում է պապիկն, իսկ տատիկը շարունակում է. «Օլիմպիական չեմպիոն Արթուր Ալեքսանեանը երբ Օլիմպիադայից վերադարձաւ, մարալիկցիները ճանապարհը ուշ գիշերով փակել էին ու նրան դիմաւորել, քէֆ-ուրախութիւն կազմակերպել՝ շնորհակալութիւն յայտնելու, որ Ոոպերթիս նկարով շապիկ էր հագել: Արթուրի արարքը մեծ քայլ էր, կարծես բոլորին նորից յիշեցրեց Ոոպերթի մասին: Համարձակութիւն էր պէտք, ամէն մէկը չէր անի: Զէ՞՞ որ, կարող էին որակազրկել, մետաղից զրկել, բայց նա արեց այդ քայլը, ու մարալիկցիները ցանկացել էին շնորհակալութիւն յայտնել Արթուրին: Մարալիկում նաեւ Ոոպերթի յուշարձանն են ուզում տեղադրել, վերջերս էլ փութպոլի մրցաշար էին կազմակերպել»:

Մըցաշարի գաւաթթը Ոոպերթենց տանն է, սենեակի ամէն մի անկիւնից նայող լուսանկարների ու պարզեւների կողքին, որոնք փոքրիկ սփոփանք են միայն այն մեծ վշտի,




որի ցաւն այդ տանը գգալու են այնպէս, ինչպէս Ոոպերթի միշտ ներկայ բացակայութիւնը:

«Մինչեւ պատերազմն էի հպարտա, որ հրաշք ընտանիք, որդիներ ու թոռնիկ ունեմ: Մենք, երկու տղաներս՝ իրենց ընտանիքներով, հաշտ ու համերաշխ մի տան մէջ ենք ապրում: Ժամանակին 15-20 հոգով սեղան էինք նստում: Այսօր էլ եմ հպարտ, որ Ոոպերթի տատիկն եմ, բայց իմ ամսութիւնն իմ գլուխը կախել է, համկանում էք: Կ'ուզէի, որ հերոսի տատիկ լինելու հպարտութեան փոխարէն երեխաս կողքին լինէր, դա կը լինէր ամենամեծ հպարտութիւնն ու ուրախութիւնը: Ամէն օր Ոոպերթի հետ կուռում եմ, նստում եմ նկարի առաջ ու կուռում... Ու մի բան ցանկանում, որ նրանք վերջին զոհե-

*Այս էջը կը հովանաւորեմ ԱՌ. և ԱՌ. Արցու և Արման Գայրիշեան*



**GARY CHAHINIAN**  
BROKER OF RECORD



**GARY (Giro) CHAHINIAN**

President, Broker of Record  
**RE/MAX DIAMOND REALTY INC.**  
TORONTO, ON CANADA


[GaryChahinian.com](http://GaryChahinian.com)  
Gary Direct **416-258-8892**

NIAGARA-ON-THE-LAKE  
421 HUNTER RD - \$2,595,000


**THE RE/MAX COLLECTION**  
*Fine Homes & Luxury Properties*



NIAGARA WINE REGION  
3910 MOUNTAIN ST - \$2,100,000



View Aerial Drones and  
Virtual Tours of all these  
properties as well as full  
details and photos at  
[GaryChahinian.com](http://GaryChahinian.com)



NIAGARA-ON-THE-LAKE  
382 WARNER RD - \$1,800,000



TORONTO  
475 OAKWOOD AVE - \$4,595,000



TORONTO & GTA COMMERCIAL  
MALLS, OFFICE BLDGS & HOTELS  
EXCLUSIVE FROM \$20M - \$250M  
(not on mls) - contact GARY direct





ըս լինեն, որ ոչ մէկի տատը, մայրը լաց չլինեն այլեւս: Ռոպերթս ինչքան երազանքներ ունէր: Պիտի գար, ուսումը շարունակէր, լաւ մասնագէտ դառնար: Մինչ բանակ գնալը մի քանի անգամ փողով գործ է արել, ես էլ հպարտանում էի, ասելով՝ չմեռայ, թոռիս փողն էլ ծախսեցի: Հիմա ես եմ ու իմ տիրութիւնը: Ընտանիքում մէկս միւսին միխթարելով, ուժ տալով՝ ապրում ենք: Երբ մենակ եմ լինում, լաց եմ լինում, գիտեմ, որ լացը լաւ բան չի, բայց չեմ կարողանում: Ինչքան անցնում է, աւելի է դժուարանում: Հիմա «տաք» ենք, յետոյ նրա բացակայութիւնը, ցաւն աւելի անտանելի կը լինի», - արցունքները սրբելով՝ ասում է տատիկը:

«Մի ինչ-որ տեղ հիմա Ռոպերթը դարձեալ հպարտ է, երեւի ասում է՝ այսքան մարդ իմ մասին են խօսում, ինձ ճանաչում են: Աշխարհի տարբեր երկրներից՝ Գանատայից, Ֆրանսիայից, Ամերիկայից, Ռուսաստանից, Պաթումից, մարդիկ են զանգում, իրենց ցաւակցութիւնները յայտնում, շնորհակալութիւն յայտնում, որ նման թոռնիկ ենք մեծացրել: Շատերն անգամ մեր տուն են գալիս, ասում են՝ եկել ենք խոնարհուելու: Ժողովուրդը Ռոպերթին ուրիշ ձեւ է յիշում ու միշտ է յիշելու», - ասում է պապիկը:

#### Կերջաբանի փոխարէն

Ռոպերթ Ապածեանին միշտ են յիշելու: Նրա սիրանքն այսօր իսկ արդէն լեկենտ է դարձել ու ապրեցնում է շատերիս: Իսկ ամէն ինչ սկսուեց 2016 թուականի Ապրիլի 1-ի լոյս 2-ի գիշերը: Արցախա-ատրպէճանական շփման գծի ողջ երկայնքով հակառակորդի զինուած ուժերի ստորաբաժանումները լայնամասշտապ յարձակումներ են կատարում: Արցախի

հիւսիսարեւելեան ուղղութեամբ տեղակայուած յենակէտային դիրքերը հրետակոծելուց յետոյ ատրպէճանական ուժերն անցնում են գրոհի: Շուրջ երեք հարիւր հոգուց բաղկացած խմբերը, զինուած լինելով նաեւ տանկերով, փորձ են կատարում գրաւելու հայկական դիրքերը: Վաշտի հրամանատար, ՀՀ ԶՈՂ կապիտան Արմենակ Ուրֆանեանի դեկավարութեամբ, վեց հոգուց բաղկացած սահմանապահ ուժերն անցնում են շրջանաձեւ պաշտպանութեան՝ երկու անգամ յաջողութեամբ յետ շպրտելով թշնամու լայնածաւալ յարձակումները այդ ընթացքում խոցելով նաեւ թշնամու մէկ հրամայլ: Անյաջող յարձակման փորձից յետոյ թշնամին յետ է քաշւում եւ կրկին սկսում հրետանակոծել հայկական դիրքերը: Արկերից մէկի պայթիւնից շուտով զոհւում են կապիտան Ուրֆանեանը եւ գնդացրող Քերարամ Սլոյեանը:

Վաշտի հրամանատարի մահուանից յետոյ, ոտքի վիրաւորում ստացած Ռոպերթ Ապածեանը հրամանատարութիւնը վերցնում է իր վրայ եւ պատնէշի վրայից շարունակում մարտը: Նկատելով, որ խրամատում զինամթերքը վերջանում է, զինուորներին ուղարկում է փամփուշտ բերելու: Այդ ընթացքում հակառակորդին յաջողուում է թափանցել դիրք: Ապածեանը, կողքին մնացած միակ ծառայակցի՝ վիրաւորում ստացած գնդացրողը Անդրանիկ Զոհրապեանի հետ, յամառ դիմակայութեամբ, նահանջում են դէպի դիրքային կացարան: Արիւնահոսութիւնից շուտով մահանում է Զոհրապեանը: Մարտական խորշում դիրքաւորուելով, Ռոպերթ Ապածեանը մինչեւ վերջին փամփուշտը շարունակում է միայնակ կուել թշնամու մեծաթիւ ուժերի դէմ, միեւնոյն ժամանակ կապ հաստատել գումարտակի հրամանատարի հետ եւ վերջինս կարեւոր տեղեկութիւններ հաղորդել դիրքում կատարուող գէպերի մասին: Նկատելով իրեն մօտեցող թշնամուն, Ապածեանը վերջին անգամ կապի է գուրս եկել եւ ասել, որ արդէն հանել է իր մօտ մնացած վերջին նոնսակն ու պատրաստ սպասում է՝ հենց մօտենան, իր հետ միասին պայթեցնելու է նրանց, որ չյանձնուի: Տեսնելով իրեն մօտեցող հակառակորդին՝ Ապածեանը բացուած նոնսակը թաքցնում է ափի մէջ եւ ձեռքերը վեր բարձրացնում, իբր յանձնուում է: Թոյլ տալով, որ բաւականաչափ մօտենան, Ապածեանն իր հետ միասին նոնսակով պայթեցնում է հակառակորդի մի քանի զինուորորի:

Գիտակցուած մահը ընտրելով՝ Ռոպերթ Ապածեանն իր կեանքով նաեւ փրկում է թիկունքից օգնութեան հասած հայկական ուժերի զինուորներին:

Ապրիլի 11-ին զինուորական կարգով Ռոպերթ Ապածեանին հողին են յանձնում «Եռաբլուր» զինուորական պանթէոնում. նա այլեւս ապրում է յաւերժական կեանքով...

Մայիսի 8-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջութեան ու արիութեան համար ՀՀՀ ՊԲ Ն գորամասի չորրորդ հրաձգային վաշտի երկրորդ հրաձգային դասակի զոկի հրամանատար, կրտսեր սերժանտ Ռոպերթ Ապածեանը յետմահու պարգևեատրուում է «Արցախի հերոս» ԼՂՀ բարձրագոյն կոչմամբ ու «Ռազմական արծիւ» շքանշանով:

Ռոպերթ Ապածեանը դառնուում է 24-րդը, ով արժանանում է «Արցախի հերոս» բարձրագոյն կոչմանը, ինչպէս նաև՝ այդ տիտղոսի ամենաերիտասարդ կրողը. նա ընդամէնը 19 տարեկան էր ու այլեւս յաւերժ:

Լուսինէ Աբրահամեան

*Միա էք կը հովանաւորեմ ԱՌ. Ե. Ռեյգու և Շումիկ Գահիկ Բենեամ*



**40 ANS DE SUCCÈS**  
SOULIGNÉ PAR LA BANQUE NATIONALE

**SPÉCIALISTE EN LOCATION À LONG TERME ET  
EN VENTES AUTOMOBILES DE TOUS GENRES.  
LA SOLUTION .... TOUTES CATÉGORIES !!!**

**Location d'Auto Lacolle Inc.**

3004 Montée Saint Aubin , Laval, Québec H7L 3N8

**TEL: (450) 688-1012**



Location Lacolle



locationlacoll



locationlacolle

# Արցախեան Բառօրեայ պատերազմի նահատակաւոները

## «Պէտք է շարունակել ապրել երեխաներին և Ղարիափ երազանքների համար»



Նույր Սիմոնեան, Ազնաւոր Բալայեան և Ղարիափ Սահակեան

Ապրիլեան քառօրեայ պատերազմից արդէն 8 ամիս է անցել, սակայն վստահաբար պէտք է նշել, որ այդ ամիսները ոչ թէ մոռացութեան են տուել ապրիլեան օրերը, այլեւ ժողովրդին հնարաւորութիւն են տուել գիտակցել եւ ընկալել պատահածը եւ աւելի սթափ վերլուծել իրողութիւնը:

Արցախը գարձաւ սերունդների պայքարը: Ապրիլին թշնամու դէմ ելել էին 1990-ականների սկզբի Արցախեան գոյամարտի մասնակիցների սերունդները, որոնց նաեւ օգնութեան են հասել գոյամարտի վեթերանները: Եւ որքան էլ ցաւալի է, մէկ փաստ ակնյայտ է՝ այն դեռ կը շարունակի մնալ սերունդների պայքարը, քանի դեռ հարցը վերջնական չէ լուծուած, առաջարկուող լուծումները հայութեան մեծամասնութեան համար անընդունելի են, ըստ այդմ հարցի վերջնական լուծումը առայժմ տեսանելի չէ...

Ստեփանակերտից վաղ առաւօտեան շարժում ենք դէպի Արցախի հարաւարութիւնի շրջանի Արեւշատ գիւղ: Այնտեղ էր իր երեք անչափահաս զաւակների հետ բնակւում ապրիլեան քա-

որեայ պատերազմում նահատակուած Ղարիպ Սահակեանի այրին՝ 25-ամեայ Աստղիկը:

Ամբողջ ճանապարհին Ղարիպի պատկերն է աչքիս առջեւ, այն մէկը՝ զինուորական համազգեստով՝ զէնքը ձեռքին, Արցախի դրօշի փոնին, հպարտու հեռուն նայող հայեացքով: Փորձում եմ մտքիս մէջ պատրաստուել, թէ ի՞նչ պէտք է խօսեմ Աստղիկի հետ, ինչպէս պէտք է խօսակցութիւնս սկսեմ: Եթոյ հասկանում եմ, որ ապարդիւն են ջանքերս, յուզգունքը խեղդում էր կոկորդս:

Գիւղ հասանք, կիսախարխուլ տան դիմաց մեզ դիմաւորեց երիտասարդ մի աղջնակ երեք մանկահասակ երեխաների հետ՝ Ղարիպի այրին էր: Ներս մտանք: Մի քանի վայրկեան լուսթիւնից յետոյ, Աստղիկը, կարծես թէ գգալով որ գժուարանում ենք խօսքեր գտնել, կոտրեց լուսթիւն...

«Դեռ չեմ հաշտուել իրականութեան հետ, ամէն անգամ, երբ մեքենայի ձայն եմ լսում տան մօտ, վեր եմ թոնում տեղիցս դէպի պատուհան, վազում, մտածելով թէ Ղարիպն է»:

Ղարիպը Հաղբութի շրջանի Տող գիւղից էր: Ծնուել է 1987 թուականին: 2007 թուականին ժամկէտային զինուորական ծառայութիւնն աւարտելուց յետոյ անցել է պայմանագրային ծառայութեան: Եղել է N զօրամասի յատուկ նշանակութեան վաշտի 3-րդ խմբի 1-ին ջոկի հետախոյզ-դիպուլկացար, 3-րդ խմբի 2-րդ ջոկի հրամանատարի եւ 2-րդ խմբի 1-ին ջոկի հրամանատար, խմբի հրամանատարի տեղակալ:

Նահատակուեց Ապրիլի 4-ին Արցախի հարաւում տեղակայուած զիրքերից մէկում՝ իր ծառակայիցների՝ Նուէր Սիմոնեանի, Ազնաւոր Բալայեանի հետ:

Տղաները երեք օր անընդմէջ նոնականետերով կուտեցին: Ամէն մէկը՝ 100-ից աւելի արև կրակեց: Հակառակորդի հրասայլը հարուածեց ու... տղերքը զոհուեցին:

«Ղարիպը քչախօս էր, երբեք չէր պատմում իր գործերի մասին: Ենթադրում էի, որ բաւական լուրջ եւ վտանգաւոր է իր ծառայութիւնը, սակայն հարցերիս միշտ պատասխանում էր՝

*Կայս Էջը կը հովանաւորեմ Շամի, Նորա եւ Ջաւադ Կէօնձեան*

Հանգիստ եղիր, ոչինչ իմ հետ չի պատահի: Մարտի 31-ին տուն եկաւ, յաջորդ օրը ետ գնաց:

«Ապրիլի 1-ին լոյս 2-ի գիշերը կրակոցներից արթնացանք: Երեխանների հետ տեղաւորուեցինք տան սենեկալներից մէկում եւ սպասում էինք, որ ուր որ է կը վերջանայ այդ մղձաւանջը: Ղարիպը զանգեց, ասաց, որ երեխաններին վերցնեմ եւ գնամ Հաղբութ: Համաձայնեցի, բայց չգնացի: Մտածում էի, շուտով կը վերջանայ ամէն ինչ եւ ինքն էլ տուն կը գայ, մտածում է, եթէ մեր՝ իմ ու Ղարիպի տանն եմ, իրեն եւ մեզ ոչինչ չի պատահի: Ապրիլի 4-ին առաւտեան նորից զանգեց, ասաց, որ չանչանգստանամ, սակայն վերջում աւելացրեց՝ Աստղիկ երեխաններին լաւ կը նայես: Զհասցրեցի պատասխանել... Մի քանի ժամ յետոյ զանգեցի, չպատասխանեց: Հարիւրաւոր անգամ զանգեցի՝ անպատասխան...

«Զգում էի, որ մի բան պատահեց: Երեկոյեան լուրը հասաւ, որ Ղարիպը իր երկու ընկերների՝ նույիրի եւ Ազնաւուրի հետ զոհուել է: Պատկերացնում էք Ղարիպի եւ Ազնաւուրի հայրն ու քեռին Արցախեան պատերազմում զոհուել էին, նույիրն էլ, ասում են՝ եղբօր գրկում մահացաւ...»:

Այս ամելուն պէս Աստղիկը ձեռքի ափերով երեսը ծածկում է, փորձելով թաքցնել արցունքները, ապա շարունակում է. «Փոքր որդիս՝ նոր է սկսել բառեր արտասանել, երբեմն պապա է կանչում, իսկ աւագ որդիս ամէն անգամ հարցնում է՝ մա՞մ, պապան չի՞ գայ, մէկ անգա՞մ էլ չի գայ... Ղարիպը շատ էր կապուած երեխանների հետ, ժամերով նրանց հետ խաղում էր երեխայի պէս: Օրեր էին հաշում մինչեւ հայրը տուն գայ, իսկ գալու օրը դարպասի մօտ ժամերով նստում եւ սպասում էին նրան: Երբ գալիս էր, տունը ուրախութեամբ էր լցուում»:

Այժմ 25-ամեայ երիտասարդ մայրիկը իր որդինների՝ 6-ամեայ Անգելի, 4-ամեայ Ալեքսի եւ 2 տարին նոր բոլորած Ալէնի հետ ապրում է Արեւշտագիւղում, ուր ամուսնանալուց յետոյ տեղափոխուել էր ամուսնու հետ: Տունը ամուսնուն են տրամադրել՝ որպէս զինծառայող, խոստացել են վերանորոգել կամ նոր բնակարան յատկացնել, սակայն այդպէս էլ չեն կատարել խոստումը:

Հին ու կիսախարխուլ տունն երեք սենեակ ունի, խոհանոց, բաղնիք չկայ:

Աստղիկը ցանկութիւն ունէր տե-



դափոխուել Գորիսում ապրող իր ծնողների կամ էլ Հաղբութում ապրող սկեսուրի մօտ, սակայն ինչպէս նա է նշում, չի ցանկանում ոչ մէկի համար բեռ լինել, եւ թէ՛ Հաղբութի եւ թէ՛ Գորիսի բնակարանները բաւական փոքր են, եւ երեք երեխանների հետ այնտեղ տեղափոխուելը դժուար կը լինի:

Ղարիպի մայրը՝ տիկին նայիրան, դժուարութեամբ է խօսում որդու մասին, խօսած դէպքում էր միայն ներկայով, կարծես թէ ողջ է եւ ուր որ է, կը գայ.

- Որդիններիս շատ դժուարութեամբ եմ մեծացրել: Աշխատանք չկար, գիւղում սրա- նրա համար թոնրի հաց էի թիվում, որ ընտանիքս պահեմ: Ղարիպը շատ հաւասարակշռուած էր, հանգիստ, միշտ օգնութեան հասնող: Վաղ տարիքից էլ ամէն ինչում օգնում էր, ասում էր՝ համբերի մամ, մեծանամ քեզ ձեռքերիս վրայ եմ պահելու:- Մի պահ կանդ է առնում, ապա շարունակում.- անընդհատ յիշում եմ Մարտի 14-ին փոքր թորանս տարեդարձին տեղի ունեցածը: Ղարիպը ասաց՝ արի միասին պարենք, պարելուց յետոյ ասաց. «Մա՞մ, իմ հետ որ բան պատահի, Աստղիկին եւ երեխաններին լաւ կը նայես, Աստղիկը փիրուն եւ շատ երիտասարդ:

է, միշտ կ'օգնես նրան, չթողես մենակ»: Չէի կարող պատկերացնել, որ ընդամէնը օրեր անց իր կէս-կատակ, կէս-լուրջ ասուած բառերը իրականութիւն կը դառնան:

Այժմ տիկին նայիրան եւ Աստղիկի ծնողները հնարաւորինս օգնում են նրան, սակայն իրենք էլ տարիքն առած եւ թոշակառու են, չեն կարող երեք երեխանների խնամքը ամբողջովին վերցնել իրենց վրայ:

Աստղիկը մասնագիտութիւն չունի եւ առաջմի չի կարող աշխատել, քանի որ փոքր են դեռ երեխանները, սակայն ապագայում պատրաստ է աշխատելու, եթէ իրեն աշխատանքի ընդունեն որեւէ տեղ:

«Ղարիպը շատ էր ուգում, որ իր գաւակները կրթութիւն ստանան, երազում էր, որ մեր աւագ որդին զինուորական կրթութիւն ստանայ եւ ապագայում բարձրաստիճան սպայ դառնայ, երեմն, երբ ամբողջութեամբ յուսալքում եմ, նայում եմ որդիններիս եւ հասկանում, որ պարզապէս պէտք է շարունակել ապրել իրենց համար եւ Ղարիպի երազանքների համար», յուղմունքը զսպելով ասում է Աստղիկը:

ԱՐՄԻՆՅԸ ՆԱՐԻՒՆԵԱՆ

*Այս էջը կը հովանաւորեն Ա. և Ա. Գրիգոր և Քրիստիան Կուրաքանակ*

## Գէորգ Զաւուշի տունը Սասնոյ մէջ

### ԻԱՀԻՇ մասին են պատմում Գէորգ Զաւուշի տան պատերը

Սասունի ամենագեղեցիկ, ամենատպաւորիչ գիւղերից մէկն է Մկտենքը: Տեղի արաբ եւ քիւրտ բնակիչները սովորութեան համաձայն ծամծում ու լղոզում են հայկական հին անուանումներն ու Մկտենքին էլ ասում են Միթինդ: Զգարմանաք, երբ ձեզ ասեն. «Նոր անունը Գիւրգենի է, բայց մենք արաբերէն Միթինդ ենք ասում», եւ երբ հարցնէք, թէ ի՞նչ է նշանակում Միթինդ արաբերէնով՝ փոքր երեխայի պէս սկսեն թարթել աչքերը:

Կէպի Սասուն հերթական ճամբորդութեան ամենավերջին կանգառն է Մկտենքը, նոյն ինքը՝ Գէորգ Զաւուշի ծննդավայրը: Նախապէս երկար ու ձիգ ամիսների ընթացքում Մկտենքը «Հետախուզած» մեր ընկերները գեռեւս Մայիսին էին աչքալուսանքով զանդ տուել. «Զաւուշի տունը կանգուն է, արի»: Վերջին օրը Մարաթուկի ստորոտին գտնուող եայլայի վրանում նախաճաշելիս դեռ պէտք է լսենք հայ Խմլօ տատի նախատանքը, որը մեզ խստիւ արգելել է Մկտենք գնալ՝ ամբողջ գիշերուայ ընթացքում պատմելով Մկտենքի մահմետականների առանձայտուկ վայրենութեան ու անխճանութեան մասին: Վերջապէս երբ Խմլօ տատին ու ամբողջ եայլայի հայերը համոզւում են, որ մենք իջնում ենք Սասունի շրջկենտրոն ուղղակի աւելի մեծ ճամբորդական պայուսակ գնելու, զինւում ենք տեսախցիկներով ու նստում «ներքեւ» գնացող առաջին պատահած մեքենան: Քանի որ արդէն հասկացել ենք, որ Սասունում որոշողը միայն ուժն է ու մինչ օրս իր ազգեցութիւնը չկորցրած աւատապետական համակարգը, առաջինը կանգ ենք առնում Սասունի ամենահեղինակաւոր արաբական ցեղերից մէկին պատկանող գիւղապետի տան դիմաց, ում երկար համոզելու կարիք չի լինում նա մեզ կ'ուղեցի Մկտենք, եւ ինչպէս վերջինս ասաց՝ ոչ ոք մեր մազին չի դիպչի:

Այսուհետ կանգառ չկայ: Գլորւում ենք ուղիղ դէպի Խաբէնողի շրջան, սակայն, թող ների մեզ Խմլօ տատիկը, շրջկենտրոն հասած թեքւում ենք ուղիղ դէպի Մկտենք տանող ոլորապտոյտ ճանապարհը:

Մկտենքի բնակիչները, որոնք պատկանում են Կենդօ աշիրէթին, այստեղ են հասատուել հենց ցեղասպանութեան տարիներին: Յատակ յայտնի չէ, թէ ո՞ր կողմից է բերուել այս արիւնարբու աշիրէթը եւ, առհասարակ, յայտնի չէ արա՞բ են, թէ՞ քիւրտ, մի խօսքով՝ թուրքի ասած «աջն ու ձախը անյայտ մարդիկ»: Բայց դա միայն առաջին հայեցքից: Սասունում խօսակցութեան միայն սկզբում են իրենց զնում անտեղեակ մարդու տեղ եւ թէյի սեղանի շուրջ նարտի խաղալիս հնարաւոր է բացել ամենափշոտ ու անհաւանական գաղտնիքները: Մանաւանդ, որ հայկական անցեալն այստեղ, այսպէս կամ այնպէս, չի շրջանցել ոչ մի ընտանիքի, եւ 101 տարի շարունակ խօսելու կարօտ մնացած ցեղասպանուածներն ու ցեղասպանողները առիթ են փնտուում ինչ-որ մէկի հետ ցաւը կամ անէծքի վախը կիսելու:

Մենք, ի հարկէ, հենց այդ խօսակցութիւններից նաեւ լաւ գիւրենք, որ «կենդօները» պարկեշտութեամբ ու ազ-



նուռութեամբ չեն փայլում ամբողջ Սասունում: Եւ այդ մասին միշտ ու ամէն առիթի պնդում են հենց նրանց ցեղակից բրտերը:

Այս, թէեւ կենդօները ներկայանում են որպէս արաբ եւ գործածում Սասունի արաբերէնի բարբառը, այս աշիրէթի դեռեւս 80 տարի առաջ քրտական ապստամբութիւններին մասնակցելը յայտնի փաստ է Սասունում:

Սասունում 1915թ.-ին հայկական կոտորածներին մասնացած, կամ աւելի ճիշդ՝ հենց այս կոտորածների շնորհիւ Սասունում հաստատուած քրտական կենդօ աշիրէթին հայերից խլուած աւարը բաւարարեց միայն 15-20 տարի, այնուհետեւ, երբ վերջիններս գլխի ընկան, որ իրենց կերկարող հայեր այլեւս չեն մնացել, դիմեցին հին բարեկամին՝ թուրքական պետութեանը, որն այս անգամ արձագանգեց մօտաւորապէս այսպէս. «Եղունգ ունէք, գլուխներդ քորէք»: Կեավուր ու հարամ հայերի պէս աշխատելու, ցանելու ու հնձելու ժամանակ չունէին այս քաջերը եւ, ի վերջոյ, 1937 թ.-ին ապստամբեցին: Զինուած արիւնալի պայքարը, սակայն, ապարդին անցաւ եւ կենդօները միւս ապստամբ ցեղախմբերի հետ միասին աքսորուեցին Սասունից: Զգիտես չարախնդաս, տիրես, թէ ուղղակի բազմանշանակ լուես, երբ կենդօ աշիրէթի ամենագեղեցիկ աղջիկը՝ նոյն ինքը իմ ընկերուհի Զանսուն պատմում է, թէ ինչպէս են իրենց աշիրէթի կանայք աքսորի ճանապարհին գանցքների վակոններում երեսներին մուր ու կովի թրիք քսել, որպէսզի ուշադրութիւն չգրաւեն, եւ թուրք զինուորների կողմից չըռնաբարուեն: Ի դէպ՝ այդ նոյն Զանսուի հասցէին բարկանալիս միայն մէկ հայուանք եմ օգտագործում. «Այ կենդօ»: Պատասխանը մէկն է լինում. «Ինձ այդպէս մի ասա, տատիկս հայ է, ես ձեր պէս եմ, ես դրանց նման չեմ»:

Թուրքիայի արեւմուչքում անցակցրած աքսորից յետոյ կենդօների մեծ մասը նախընտրեց օգտուել պետութեան

*Կայ էք կը հովանաւորին Ա. և Ա. Ասրդիս եւ Նաման Կայրաբեան*

Համաներումից եւ վերադաշտան Սասուն: Սակայն այս անգամ վերջիններս սկսեցին իւրացնել արաբերէնի տեղական բարբառն ու Սասունի ապստամբութիւնից յետոյ այստեղ սկիզբ առած արաբական ազգեցութիւնը, որն ապստամբութեան ճնշումից յետոյ աճում էր քրտական ազգեցութեան խորտակմանը զուգահեռ: Արաբախօս դարձած կենդօները բազմաթիւ քրտական աշխրէթների պէս ապստամբի կարգավիճակից անցան իշխանամէտ ու իշխանապաշտ դիրքի եւ աւելին՝ այսօր Սասունում հանդիսանում են ամենահզօր հակաբրտական ուժերից մէկը: Աւելի շատ հենց նրանց, այլ ոչ թէ թուրք զինուորների ձեռքով են 1980-90-ականներին Սասունի սարերում փոռւել քիւրտ գրոհայինների դիակները եւ հենց նրանց տան ցանկապատերի վրայ ու ֆէյսպուքի էջերում է ամենաշատը երեւում թրքական դրօշակը:

Այնպէս ստացուեց, որ Մկտենք մենք ժամանեցինք Սասունի Կուսպետ գիւղում ծնուած հայերից մէկի՝ Արթինի հետ, ով մեքնայից իջնելուց յետոյ ժամեր շարունակ կանգնած նայում էր Մկտենքի գեղեցիկ, քարաշէն, հիմնականում երկյարկանի հայկական տներին ու դրանց շուրջ վազող արաբախօս մանուկներին: Եւ ես գիտէի, թէ ինչո՞ւ: Կուսպետը, ուր ծնուել էր մեր ընկերը եւ, որը գտնուում է Սասունի մէկ այլ՝ Հազզօ շրջանում, գաւառի ամենաանառիկ ու բարձրադիր գիւղերից մէկն է: Այն բնական փակ ամրոց էր բազմաթիւ հայ որբերի համար, որոնք յաճախ գիշերում էին Կուսպետի գիմացի ժայռերում, իսկ քրտական ու արաբական աշխրէթների ներսում գերութիւնից փրկուելուց յետոյ ոմանք փոքրիկ, մութ ու խարիսով հողէ տնակներն էին շինում իրենց անփորձ ձեռքերով: Զեռքեր, որոնք շատ բան չէին կարող սովորած լինել իրենց գլխին կանգնած քիւրտ աղաներից, ում տանը ստրուկ էին որբանալուց ի վեր կամ ծնուած օրուանից ի վեր: Այս հայերը Սասունի քարքարոս այդ հատուածում գըլգըլ ու ցորեն էին ցանում, ամրանը այծեր արածացնում լեռներում, իսկ աշնանը բեռնակրութեամբ գումար վաստակում ընկնելով տնչտուն, գիւղէգիւղ՝ նեղլիկ ու քարքարոս ճանապարհներին կորցնելով մի ամբողջ մանկութիւն:

Մինչդեռ կանաչապատ, լայն լուսաւոր ճանապարհներով ու հայերից մնացած երկյարկանի տներով Մկտենքում անգամ նմոյշի համար մէկ գէթ հայ չէր մնացել: Իսկապէս չկար:

Գուցէ մինչեւ գիւղ հասնելու պահը ինչ-որ թաքուն յոյս ունէինք, բայց չէ, չկային: Գեղեցիկ, ինձորի ծառերով, ելակի թփուտներով ու խաղողի վազերով հարուստ այդիները, դրանց գլխին կանգնած բաց գոյնի քարով շարուած հին տները նայում էին մեզ, մենք նրանց:

Գէորգ Զաւուշի անունն ու տան տեղն այստեղ գիտեն բոլոր գիւղացիները:

Տան մէջ որոշ ժամանակ ապրել է մի քիւրտ ընտանիք, այնուհետեւ անյայտ, անհասկանալի ու ինամքով թաքցուող պատճառներից ելնելով լքել են տունը: Սակայն մինչեւ գուրս գալը հասցրել են կառուցել երկրորդ յարկը: Ինչո՞վ կարողացել կառուցել են. անտաշ քարով, տեղ-տեղ պատմական կոթողների քարերով: Տան առաջին յարկը, որտեղ էլ ժամանակին ապրել է Զաւուշը, կիսով չափ արդէն ընկմուել է հողի մէջ: Ետեւի հատուածում գոմն է, որի պատին նկատելի է Գէորգ Զաւուշի ձիու կայանատեղին, որտեղից Զաւուշը կապել է իր ձին:

Տան մուտքն անդուռ է, դիմացի հատուածը փոքրիկ



պատշգամբի տեսքով բաց է մնացել:

Ինչպէս ամբողջ թուրքիայում, այնպէս էլ այս փոքրիկ գիւղում ցեղասպանների թունիկներն ունեն պատմութեան իրենց՝ լաւ մշակուած տարբերակը: Բայց այդ տարբերակը յօրինելու համար իրենք չեն իրենց նեղութիւն տուել, այդ հարցերն այստեղ լուծում է ամենակարող պետութիւնը՝ դպրոցական դասագրքերի տեսքով: Զգարմանաք ու չնեղուէք, եթէ Մկտենքում ձեզ ամենայն լրջութեամբ, իսկ երբեմն էլ ժպիտով պատմեն, որ Գէորգ Զաւուշի տան մօտակայքում թաղուած է 7 քլկ. քաշով ոսկեայ պարգեւ, որը «Գէորգ աղան» ստացել էր ոռւսներից եւ այդ ոսկին անպայման պէտք է գտնել: Այդ իսկ պատճառով հայերի այցելութիւններն այստեղ ընդունուում են մեծ խանդակառութեամբ, ոգեւորուածութեամբ ու սպասումներով: Իւրաքանչիւր մէկը, ով իրեն մարդասէր է համարում, երեւի այդ պահին կը տիրի ոչ թէ նրա համար, որ իր աչքերի մէջ նայելով տգեղագոյն սուտ են ասում, այլ նրա համար, որ այդ սոված աչքերով ու մէկ դարշարունակ ինքնախաբութեան, կշտանալու ու իր ոտքի տակի

*Միւ Էջ կը հովանառի՛ ԱՌ և ԱՌ. Քրիզակ եւ Մարի Ղաբոյցեան*



Հողի արժեքը հասկանալու բանաձեւը չփառած այս մարդիկ իրապէս հաւատում են իրենց ասածին ու համոզուած են, որ իրենց արածը բնական է ու արդարացուած: Իրականում պէտք է, որ ափսոսամ խօսքերս ու զգացումներս դասական դարձած այս խօսակցութիւնների մասին գրելու համար, մասնաւանդ, որ ասելիքս ու խորհուրդս մէկը պէտք է լինի. այս մարդկանց Գէորգ Զաւուշի՝ 7 քէկ-նոց ոսկէ պարզեւ ու ուսւների հետ ընդհանուր ոչինչ չունենալու, ցեղասպանութեան, մեղքի, անցեալի ազդեցութեան, խոճի, մարդկային արժէքների մասին խօսելու վրայ ո՛չ ժամանակ, ո՛չ էներկիա մի վատնէք: Մի արէք:

Մի քանի տէրեր ու ինքնութիւններ փոխած այս աշխրէթի՝ Մկտենքում հասատուելու տարիններին այստեղ դեռ ծխում էին երկու հայ ընտանիքների տներ: Դրանք միակն էին, որոնք յաջողացրել էին ողջ մնալ եւ գոյատեւել ցեղասպանութիւնից յետոյ: Սակայն մի քանի տարի անց կենդօները գաղթեցրեցին այս երկու ընտանիքներ նոյնպէս: Ֆիզիքական գոյութեան մշտական սպառնալիքի տակ ապրելը յատկապէս բարդ էր, երբ այս հայկական ընտանիքները յաջողացրեցին ոտքի ենել, ամուսնանալ, բազմանալ, կառուցել ու չէնացնել նորից: Այն պահին, երբ հասկացան, որ իրենց ֆիզիքական գոյութիւնն այստեղ չեն հանդուրժելու, Մկտենքի վերջին երկու հայկական ընտանիքները ճարահատեալ դուրս եկան գիւղից, սակայն չեռու չհասան, հաստատուեցին ընդամէնը երկու գիւղ այն կողմ գտնուող թըքսէում, որտեղ էլ ապրում են մինչ օրս:

Թըքսէում պատմում են, որ ընտանիքներից մէկի մայրը հենց Զաւուշի զարմուհիներից մէկն է, որի հայկական անունն իմացող սերունդը, սակայն, արդէն կենդանի չէ, իսկ մահմետականացուելուց յետոյ փոխուած անունը Ֆերիտէ է եղել:

Ճակատագրի հեղնա՞նք էր արդեօք, որ Միանպուլում 4 տարի շարունակ ճանաչած սասունցին պէտք է պարզուէր հենց այս երկու ընտանիքներից մէկի զաւակը:

- Ի՞նչ կայ չկայ Սոփօ:

- Հեծ, Մկտենքի նկարներն եմ ներբեռնում:

- Հա՛, պապիկիս գիւղը:

- Զհասկացայ, դուք թըքսէցի չէի՞ք:

- Ե հա՛, բայց Մկտենքից ենք եկել:

- Հմմ, գիտես չէ՞ Գէորգ Զաւուշի գիւղն է (տրամադրուած յառաջիկայ բոպէներին պատմութեան դաս տալ ընկերոջս):

- Հահա՛, ինչպէ՞ս չգիտեմ, մեր ազգականն է:

Մօտաւորապէս այսպէս ու հենց այս խօսակցութիւնից յետոյ սկսուեց Զաւուշի տան հետքերով արշաւու:

Զաւուշի տան նշանակութիւնն ինձ համար աւելի ուշ պէտք է կարողանայի արտայայտի: Հենց այն ժամանակ, երբ Սասունի հայերի մասին «Հայերէն չըմ գինը» Փիլմիս մոնտաժի ընթացքում յարմար տեսարան էի փնտուած Սասունի մէկ այլ՝ Փշուտ գիւղում ծնուած Լուսին անունով երիտասարդ հայ կնող պատմածներին ներքոյ տեղադրելու համար: 4 տարեկանում Միանպուլ տեղափոխուած Լուսինն այսպիսի մի բան ասաց իրենց գիւղի եւ տան ճակատագրի մասին. «Հայրիկս մայրիկս Սասուն գացին, մայրիկս շատ գէշ եղաւ, շատշատ գէշ եղաւ: Հարկաւ, տեսաւ իր տունը, մէկը չկար, կանաչութիւն չկար: Ամէնը չորցել էր: Բոլոր այդ ծառերը հիմա չկան, ամէնը չորցան, հողերը չորցան»:

Լուսինին լսելու ամբողջ ընթացքում Զաւուշի դատարկ տունն է աչքիս առաջ: Դատարկ պատերը, տան վրայ խոնարհուած թթենին, կիսատ ցանկապատը, այգու անուան տակ մեր տեսած չէկ հողն ու տան ներսում ոսկի գտնելու նպատակով փորուած փոսերը:

Հենց գա էլ տեղադրեցինք Լուսինի խօսքերի ներքոյ: Ֆիլմում հենց Զաւուշի տունն է:

Դա հենց այն, ամէն մէկիս երազած «Էրկրի» դատարկ տունն էր, ամբողջ հայութեան Արեւմտեան Հայաստանի այն անդուս տունը, որն այցելելը երեւի գրուել է մի հազար կտակների մէջ, յիշատակուել հարիւր հազար երգերի մէջ ու միլիոնից աւել բոցաշունչ հայրենասիրական ելոյթներում:


Եւ հենց այդ կիսախոնարհուած տան դիմաց կանգնած ժամանակ գիտակցում ես, թէ որքան փոքր, որքան աննշան են այս ամէնի առաջ ցեղասպանութեան մասին մեր վանկարկումները: Որովհետեւ որքան էլ կուրծք ծեծենք, որքան էլ բղաւենք ու ամբողջ կոկորդով էրկրի մասին երգեր երգենք՝ մենք ունակ չենք ամբողջութեամբ գիտակցելու այս երեւոյթը, այս աղէտը, այս կորուսար, այս դասը: Դա իրապէս ծանօթ է միայն Միանպուլի շուկաներում գնած քաղցր սուճուխի մէջ ամէն անգամ Սասունի քաղցր սուճուխի համը փնտուող Լուսինին ու Բըքսէում իր գառներին արածացներիս միշտ Մկտենքի դիմացի ըլրին նասող ու Զաւուշի տանը նայող թակորին: Երկու գիւղ այն կողմ ապրող ու իր սիրելի Մկտենքին այդպէս էլ չմօտեցած Յակոբը: Կամ Զաւուշի տնից ոչ շատ հեռու, ինչ-որ ժայռերում ապաստանած հայ մանուկները, որոնք ցերեկը ցելիսից տուն էին շինում, իսկ երեկոյեան նորից կծկում խոնաւ քարանձաւում: Զաւուշի տանից մի քանի տասնեակ քլմ. այն կողմ: Նրանք են համականում ցեղասպանութեան ամբողջ աղմուկը 100 տարուայ լուութեան մէջ: Իսկ նրանց ունակ են հասկանալ միայն Արեւմտեան Հայստանի ճանապարհներին անգերեկման 1.5 միլիոն մեռեները, այսինքն՝ ոչ ոք:

Գուցէ ամենամեծ բանը, որ կարող ենք ու պէտք է անենք՝ հենց այն Լուսիններին, Արթիններին ու Յակորներին լսելն է, ուղղակի լսելը: Որովհետեւ միայն նրանց բերանով կարող են խօսել Զաւուշի ու, առհասարակ, էրկրի բոլոր լքուած տների դատարկ պատերը:

Սոֆիա Յակոբեան

*Այս էջը կը հովանաւորեմ Ա. և Ա. Կուտայիսի և Արմեն Միհրանյանի համար*

# JERUSALEM RESTAURANT



[www.jerusalemrestaurant.com](http://www.jerusalemrestaurant.com)

4775 LESLIE STREET,  
TORONTO, ON M2J 2K8  
TEL.: (416) 490-7888

TAKE OUT  
CATERING  
BANQUET FACILITIES  
**416-490-7888**

mediterranean  
**buffet**



Coach Travel is still  
the safest, most  
economical, and  
eco-friendly way  
to travel.

SIT BACK AND  
RELAX LUXURIOUSLY  
-WE'LL DO THE  
*driving*

GROUPS AND CHARTERS  
WE SPECIALIZE IN:

- Tour Operators
- Convention/Meeting Planners
- Various Associations
- Government Agencies
- Shuttles
- Airport Transfers
- Corporate Travel
- Casinos
- Private Tour Groups
- School Boards
- Weddings
- Free Casino Trips



*Serving southern Ontario for over 35 years*



221 CALDARI ROAD, CONCORD, ON, CANADA, L4K 3Z9

T: 905.738.2290 • [WWW.CAN-ARCOACH.COM](http://WWW.CAN-ARCOACH.COM)

With over 35 years of industry experience, Can-Ar Coach Service specializes in group travel and operates more than 40 luxury tour coaches. Can-Ar Coach Service is a wholly owned subsidiary of York Region's respected Tokmakjian Group of Companies, which offers a range of services across a spectrum of transportation that includes servicing fleets such as GO Transit and Mississauga Transit. Facilities for Can-Ar Coach Service are located in areas that cater to Pearson International Airport, Toronto and southern Ontario.

# Մենք այստեղ ենք, ամէն մի զինուորի կողքին



(Լուսանկարը՝ Արմէն Երամիշեանի)

Ապրիլեան քառօրեան հայկական իրականութեան մէջ շատ բան փոխեց. այն համայն հայութեան ուշադրութիւնը, անկախ մասնագիտութիւնից եւ ապրելու վայրից, սեւեռեց դէպի առաջնագիծ, ուր 18-20 տարեկան զինուորն ու իրենից ոչ այնքան տարիքով սպան որոշեցին համայն հայութեան, անկախ մասնագիտութիւնից եւ բնակութեան վայրից, ճակատագիրը՝ անկարելին անդամ կարելի գարձնելով։ Զոհասեղանին ամենաթանկն էր՝ բազում մատաղ կեանքեր։

Այսօր՝ 5 ամիս անց, ապրիլեան քառօրեան ու նրա հետեւանքները մեր կեանքի անբաժանելի մասն են շարունակում կազմել, բոլոր մտահոգութիւնները, յոյսերն ու աղօթքները ուղղուած են առաջնագծում կանգնած զինուորին ու սպային, նրանց անվտանգութեանը։

Ապրիլեան իրադարձութիւններին յաջորդած օրերին, երբ հասարակութեան մէջ շարունակում էր վհատութեան եւ յուսալքութեան միջնորդալ գերիշխել, բաւական էր առաջնագիծ այցելել, ուր ժամանակ դէմքին դիմաւորելու էին գալիս զինուորները, սպաներն ու կամաւորականները, ուր մէկ այլ միջնորդալ էր տիրում՝ յաղթանակի եւ վճռականութեան, անձնագութեան եւ վրէժի պատրաստ։

«Քոյրիկ ճան, ամէն ինչ լաւ կը լինի, մենք այստեղ ենք, հանգիստ եղէք», նոյն ժպիտով ասում էին ինձ հանդիպած բոլոր զինուորները, երբ նկատում էին մտահոգութիւնս։ Քանի՞ քանի՞ դիրքերում եմ լսել այս խօսքերը եւ պարզապէս հասկացել՝ եթէ անպարտ է 18 տարեկան, դեռ կիսապատանի-կիսաերիտասարդ զինուորը, ապա մենք դատապարտուած ենք միայն յաղթանակելու, միայն թէ մենք՝ նրանց կողմից հակուող սահմանից այս կողմ ապրողներս, իրենց պէս հաստատակամ լինենք ու նրանց թիկունքին անդաւածան

կանգնած՝ չթողնելով երկրի ճակատագիրը միայն նրանց՝ 18-20 տարեկանների ուսերին (չնայած, որ նրանք առանց այդ էլ անխօս եւ անմնացորդ վեցցրել են այդ պարտականութիւնը)։

5 ամսուայ ընթացքում հազարաւորներ են այցելել առաջնագիծ՝ իրենց երախտիքի խօսքը փոխանցելու, սեփական աչքերով տեսնելու կենդանի հերոսներին եւ պարզապէս ձեռք սեղմելու եւ ասելու՝ ապրէք տղերք։

Հերթական այցերից էր՝ Առաւոտեան Ստեփանակերասից ճանապարհութեցինք Մարտունու զօրամասերից մէկը, որտեղից մեզ պէտք է ուղեկցէին առաջնագիծ։ Այս անգամ ուղեկցում էի Սփիւռքի մեր լրատուամիջոցներից մէկի՝ «Հորիզոն»ի աշխատակիցներին՝ գիշաւոր խմբագիր Վահագն Գարագաշեանին եւ լրագրող Նորա Եագուակեանին։

Սա նրանց առաջին այցելութիւնը չէր առաջնագիծ, սակայն առաջինն էր քառօրեայ պատերազմից յետոյ։

Պարզուեց վարորդը՝ Մասիսը, ապրիլեան դէպքերին առաջին կամաւորներից էր։ Նրա եղբայրը զինուորական է, հայրն էլ, իմանալով, որ Մասիսը Թալիշի ուղղութեամբ է գնացել, պարտազրել էր զինկումիարիստի իր ծանօթ աշխատակցին իրեն եւս ուղարկել այնտեղ։ Սա մի գույշ զարմանք առաջանէր օտարների մօտ, բայց մեզ համար դա սովորական երեւոյթ է արդէն դարձել դեռևս 25 տարի առաջ։

Նոյնիսկ կատակով ասում էին. «Մենք՝ հայերս, զարմանալի ժողովուրդ ենք, արտազալթում են խաղաղ ժամանակ, ներդաղթում՝ պատերազմի դէպքում»։

Զօրանոցի նեղ եւ աղքատ գրադարանի փոքրիկ ելեկտրական վառարանի վրայ մեզ համար սուրճ եփեցին։ Գրադարանի աշխատակից կանայք հիւրերին հարցուփորձ էին անում, թէ որտեղից են եւ կէս կատակով, կէս լուրջ, առանց պատաս-

*Կայսէջ կը հովանաւորեմ ԱՌ. և ԱՌ. Կիրամի և Կայսէր Պալայօվեան*



(Հուսանկարը՝ Արմէն Երամիշեանի)

խան ակնկալելու, հարցնում՝ մեր հարցից ի՞նչ են խօսում աշխարհի մեծերը։

### Առաջնագիծ

Դիրքի դիմաց մեզ են դիմաւորում դիրքապահ շները։ Հոսոտալուց յետոյ, մեր կողմից վտանգ չտեսնելով, թոյլ են տալիս ներս մտնել։

Դիրքի աւագը՝ ժպտադէմ, խոշոր, թուխ աչքերով երիտասարդը, դիմաւորում է մեզ՝ թոյլատրելիի սահմաններում ներկայացնելով իրենց կենցաղն ու առօրեան։

Դիրքում անմիջապէս աչքի է զարնում արեւային էներգիայով ելեկտրականութեան սարքը, եւ զինուորներից մէկը պարծանքով նշում է՝ եզակի դիրքերից ենք, որ ելեկտրականութիւն ունենք, սարքը Մոնթէ Մելքոնեանի ընկերներն են նուիրել։

Մի քանի բոպէ շրջելով դիրքում՝ մեզ հրաւիրում են քարից շինուած սեղանի շուրջ՝ համտեսելու իրենց իսկ պատրաստած սուրճը։

Փոխհրամանատարը, ով մեզ ուղեկցում էր, դառնում է դէպի տղաները, ովքեր այդ պահին ազատ էին, հրաւիրում՝ միասին նստելու։

Նա անվերջ կատակում էր, բոլորին անուն առ անուն ձանաչում էր, գիտէր որտեղից եւ որ շրջանից են՝ դիմելով իւրաքանչիւրին իր իսկ բարբառով։

Լսել էի, որ առաջնագծում համտեսած սուրճն ամենայւրայատուկն ու համեղն է լինում, իսկ այս անդամ համոզուեցի՝ իւրայատկութիւնը սուրճի մէջ չէ, այլ թէ ո՛ւմ հետ ես այն ըմպում։

Զարմանալի մի իւրատիպութիւն ունի հայ զինուորը՝

չի ցանկանում իր իսկ հերոսութեան մասին խօսել, գրանից ինքնըստինքեան քաշւում ես, սկսում ես բառերը հատիկ-հատիկ ընտրել՝ գիտակցելով, որ դիմացդ ոչ թէ 18-20 տարեկան երիտասարդ է, այլ՝ պատերազմով անցած տղամարդ։

Մի պահ լուսաթիւն է տիրում։ Վաշտի հրամանատարը, ով այդ ժամանակ շրջայց էր կատարում դիրքերով, կոտրելով լուսաթիւնը՝ ասում է։

- Զկարծէք, թէ եթէ լուռ են, գործի մէջ էլ են պասիւ, զարմանալի է, բայց այս սերունդը մեզնից անվախ է եւ գերազանցող։

Ամենաշարաճճի զինուորն էլ կողքից աւելացնում է։

- Պարո՞ն հրամանատար, ձեր հրամանով եւ ձեզ հետ պատրաստ ենք դեռ աւելին անել։

Պատրաստում էինք վերադառնալ։ Ընկեր Վահագնը եւ Նորան մի առ մի բոլորին իրենց երախտիքը յայտնեցին՝ սեղմելով բոլորի ձեռքերը՝ եւ եղբայրաբար, եւ մայրաբար գրկելով նրանց։

Վերադարձին մեզ ուղեկցող կատակասէր հրամանատարն ասաց։

- Տեսա՞ք տղաների ուրախութիւնն ու ժպիտները. իմ ամենամեծ եւ առաջնային առաքելութիւնը դա է, յետոյ արդէն միւս բաները։ Երբ զինուորն ուրախ է եւ զգում է, որ հրամանատարը, բացի հրաման տալուց նաև կարող է վստահել եւ արժեւորել իրեն, նա անպարտելի է դառնում։ Դուք հանգիստ եղէք, մենք այստեղ ենք, ամէն մի զինուորի կողքին, եւ սա լոկ խօսքեր չեն։ Շուտով երեք զաւակներս էլ զինուոր կը լինեն։ Զինուոր լինելն ամենապատուաբեր գործն է այսօր։

ԱՐՄԻՆԵ ՆԱՌԻՆԵԱՆ

*Կայս Հեր կը հովանաւորեն Մ. և Ա. Վիլեն և Շուֆիկ Խերշեան*



# AUTOMOBILES INTER-LUX INC.

CENTRE DE CARROSSERIE ET PEINTURE  
VOITURES D'HAUTE GAMME



VENEZ VISITER NOTRE NOUVEL EMPLACEMENT!

[www.interlux.ca](http://www.interlux.ca)

2025, RUE MONTEREY LAVAL, QUEBEC H7L 3T6 MTL: 514-394-1162

## «Որպէս հայախու գաղութ՝

# Գանատան Սփիդոքի ամէնէն կայուն կոռուաններէն մէկն է»

## Հարցազրոյց ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի Աերկայացուցիչ ընկ. Ռաֆֆի Տօնապետեանի հետ

**Հ.՝ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը Օքառուայէն նպատակալաց բաղաժական աշխատանք կը տանի:** Այս տարի կայացաւ Հայ Դատի երկրորդ նուիրահաւաքը: Ի՞նչ էր նուիրահաւաքին նպատակը, եւ ո՞ւր հասանայդ աշխատանքները:

**Ռ.Տ.- Այս նուիրահաւաքները առնուազն 50 տարիէ ի վեր տեղի կ'ունենան Գանատայի մէջ: Առնուազն կ'ըսեմ, որովհետեւ երբ Սենթ Գաթրինզի նուիրահաւաքին մասնակցեցայ, կեղոնի սրահներէն մէկուն մէջ նամակ մը կար, որուն մէջ յիշուած էր, որ 1915 թուականին, երբ գաղութիս մէջ տակաւին Հայ Դատի յատուկ յանձնախումբ չէր գործեր, այլ ՀՅԴ կոմիտէի անունով Հայ Դատին ի նպաստ աշխատանք կը տարուէր, Ապրիլ 24-էն մօտաւորապէս մէկ ամիս առաջ դրամահաւաք կազմակերպուած է՝ օժանդակելու համար Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ ապրող հայերուն: Հետեւաբար եթէ պրատիենք 1903-1904-ի արխիւները, վստահ որ գործունէութեան փաստաթուղթեր պիտի գտնենք, որովհետեւ Հարաւային Օնթարիոյի մեր գաղութները այդ օրերուն կազմաւորուած են: Իսկ մեր այսօրուան հասկացողութեամբ Հայ Դատի աշխատանքները ասկէ 50 տարիներ առաջ սկսած են, եղեռնի 50-ամեակի պատմական այն օրերուն, երբ զարթօնքի շրջան կ'ապրէր ամբողջ Հայ ժողովուրդը:**

**Այս աշխատանքները միշտ դրամահաւաքներու կը կարօտին, որովհետեւ ծրագրիներ կան, որոնք միայն մեր կամաւոր բանակին ջանքերով չեն կրնար իրականանալ: Հայ Դատի յանձնախումբը եւ Կեդրոնական կոմիտէն որոշեցին, որ այս տարուան նուիրահաւաքը 1-2 ամսուան ընթացքին կատարուին: Ակսանք Քենաքէքն՝ լաւալ-Մոնթրէալէն, ապա Հարաւային Օնթարիոյի մէջ՝ Սենթ Գաթրինզ, Գէմպրիճ, Համիլթոն, որմէ ետք Թորոնթօ եւ վերջին անգամ Վանգուկը: Այս ձեռնարկներուն ներկայացուեցան տեղական եւ շրջանային Հայ Դատի յանձնախումբերու աշխատանքներու գեկոյցներ եւ ծրագրիներ: Ձեռնարկներուն հիւր ունէնք ՀՅԴ Բիւրոյի անդամ ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանը, որ Գանատայի ներկայացուցիչն է եւ Հայ Դատի Համաշխարհային Խորհուրդի ատենապետն է: Իւրաքանչիւր ձեռնարկի նաև հրաւիրած էնք Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբէն հիւրեր:**

**Հիմնականին մէջ այս բոլորին նպատակը յաջորդ տարիներու Օթթառուայի մէջ տարուելիք մեր Հայ Դատի աշխատանքներուն նպաստելն է: «Հորիկոն»ի մեր ընթերցողները տեղեակ են, որ ընկ. Սեւակ Պէլեան նշանակուեցաւ Հայ Դատի Օթթառուայի գրասենեակին գործադիր տնօրէն եւ արդէն աշխոյժ աշխատանքի սկսած է: Հայ Դատի յանձնախումբը ամիսներ առաջ Խորհրդարանի Հայաստանի Բարեկամներու խմբակցութեան նուիրուած ձեռնարկ մը իրագործեց, որուն մեծ թիւով երեսիւաններ եւ երկու նախարարներ ներկայ էին: Զանազան հանդիպումներ տեղի ունեցան վերջին ամիսներուն ընթացքին նախարարներու եւ երեսիւաններու հետ, որոնցմէ վերջին հանդիպումը Արտաքին Գործոց նախարարին հետ էր: Ընկ. Սեւակը, ընկ. Յակոբ Տէր Խաչատուրեանը եւ**



**ընկ. Ժիրայր Պասմանեանը հանդիպումներ ունեցան Ստեփան Տիռնին հետ, որուն ընթացքին օրակարգի վրայ էին Հայաստան-Գանատա յարաբերութիւնները, տնտեսական ծրագիրներ, Հայաստանի մէջ Գանատական դեսպանատան կարեւորութիւնը, ինչպէս նաև յոյսով ենք, որ Արտաքին Գործոց նախարարը կ'ընդառաջէ իրեն ուղղուած հրաւէրին եւ որպէս Արտաքին Գործոց նախարար կ'այցելէ Հայաստան: Նշենք, որ Ստեփան Տիռնը, որպէս երեսփոխան, այցելած է թէ՛ Հայաստան եւ թէ՛ Հարաբերադ: Սեղանի վրայ էր նաև Զաւախիքի եւ Արցախի հարցերը, եւ այս գծով կը հանդիպինք բոլոր երեսփոխաններուն եւ նախարարներու հետ Օնթարիոյ, Պրիթիշ Գոլոմպիա, Քենաքէք եւ այլուր, որպէսզի Հայ Դատի մեր ծրագիրները յաջողութեամբ ի կատար ածենք:**

**Հ.՝ Այստեղ փակագիծ մը բանալով նշենք, որ մօտաւորապէս տասնամեակի մը ի վեր թքական եւ ատրպէյնանական հակահայ բարոզչութիւնը, յատկապէս Հիւսիսային Ամերիկայի ցամաքամասին վրայ շատ մեծ քափի ստացած է, մանաւանդ այն երեւոյքը, որ նիւ ենրիքի եւ Օքքառուայի մէջ կը պատահի, երբ Ապրիլ 24-ի մեր հայկական ժողովորդային հաւաքներուն ընթացքին հակացոյց կը կատարուի մեզի դէմ: Ի՞նչ ծրագիրներ ունի Հայ Դատի յանձնախումբը սանձելու համար նման հակահայ բարոզչութիւններ:**

**Ռ.Տ.- Նախ ըսեմ, որ այս հակահայ աշխատանքները կազմակերպուած են դեսպանատան կողմէ՝ թրքական կառավարութեան մղումով անշուշտ, նոյնիսկ փաստացի տուեալներ ունինք, որ ցոյցերուն մասնակցողները կը վճարուին: Մենք բնաւ պիտի չարտօնենք, որ այսպիսի հակագդեցութիւններ**

**Միա էջը կը հովանառուի Ա. և Ա. Մայրը Ժողի և Միք Խորոյեան-Ժողի**

# COME HEAR WHAT YOU HAVE BEEN MISSING



hearing aid source



TRY HEARING AIDS  
**RISK-FREE**

Call 416 754-4327



699 Coxwell Avenue  
Toronto, ON M4C 3C1  
Tel: 416 463-4327(HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Road,  
#65 Toronto, ON, M1R 4B9  
Tel: 416 754-4327(HEAR)

[www.hearingaidsource.ca](http://www.hearingaidsource.ca)

- Free Hearing Tests
- No obligation Hearing Aid Trial
- Hearing Protection

Images copyright Otocon Canada Ltd.



## hearing aid source

*invisible, custom & comfortable*

որեւէ ձեւով ազդեն մեր ապագայ ծրագիրներուն վրայ: Մեր նպատակը յստակ է, եւ մեր աշխատանքները պիտի չարունակուին: Սակայն նշենք, որ նման ցոյցեր միայն երեւելի երեսն են այդ հակահայ գործունէութեան, կան նաեւ աներեւելի երեսները, որոնց համար մեծ գումարներ կը ծախսուին թէ թրքական եւ թէ ազգային անական դեսպանատան կողմէ՝ ճնշում բանեցնելու գանատական կառավարութեան վրայ, որպէսզի գանատական եւ խորհրդարանը եւ նահանգները եւ քաղաքապետարանները իրենց անցեալի հայանպաստ կեցուածքներէն զիջին: Այո՛, Ապրիլ 24-ին հակահայ ցոյցերու երեւոյթը մեզի համար գատապարտելի է, բայց հիմնականին մէջ այդ մէկը միայն փոքր մասնիկ մըն է տարուած հակահայ աշխատանքներուն, որոնց դէմ մնայուն պայքարի մէջ ենք:

Այս գծով շատ կարեւոր է մեր գաղութին համերաշխութիւնն եւ մեր բոլոր կազմակերպութիւններուն միասնականութիւնը՝ հակագելու նման քարոզչութեանց: Պէտք է բաւածահան չընենք, որ մենք իրականութիւնը կը յայտնենք աշխարհին, մինչ մեր թշնամին իրականութիւնները կը խեղաթիւրէ, տնտեսական լծակներ կ'օգտագործ եւ սպառնալիքներ կը տեղացնէ. օրինակ՝ ֆրանսան, Գերմանիան Գանատան եւ շարք մը այլ երկիրներ երբ քաջութիւնը ունեցան դիրքորոշումներ որդեգրելու, թուրք դիւանագիտութիւնը ձայն բարձրացուց, դեսպանը տուն կանչեց քանի մը ամսուան համար, սպառնաց, եւ յետոյ ամէն ինչ վիրադարձաւ իր սովորական հունին: Թրքական գիւտանագիտութիւնը թուրքիոյ մէջ իր ժողովուրդին կ'ուզէ ձեւացնել, որ ինք կարծր եւ անզիջելի կեցուածք որդեգրած է այս հարցով:

Հ.- Այս տարուան Արցախին բառօրեայ պատերազմին ընթացին Գանատան իր անմիջական զօրակցութիւնը յայտնեց, մասնաւորապէս Գանատայի ՀՅԴ-ի կառոյցը: Դուք մամուլով հանդէս եկած եւ յայտնեցիք մեր զօրակցութիւնը Արցախին: Ինչպէ՞ս էր Գանատայի ներդրումը այս Արցախին բառօրեայ պատերազմին ընթացին:

Ո.Տ.- Առաջին հերթին անհրաժեշտ էր, որ գանատական կառավարութիւնը՝ կազմակերպութիւններ եւ քաղաքական դէմքեր, գատապարտեն Ասրպէյնանի կողմէ շղթայագերծուած պատերազմը, որ իրականութեան մէջ Ազգայինանի կողմէ զինագագարի խախտում էր: Հետեւաբար անմիջապէս աշխատանքի լծուեցանք. մեր Հայ Դատի յանձնախումբերը եւ մեր երիտասարդականի տղաքը նամակներ յղեցին առ որ անկ է, որպէսզի գատապարտութիւնները ապահովենք: Որոշ յաջողութիւն ձեռք բերինք, այն իմաստով որ քաղաքական դէմքեր գիւտանագիտական առումով ընդհանուր վիճակը գատապարտեցին եւ չուզեցին մատունանշել Ասրպէյնանը: Սակայն պէտք է նշեմ, որ մեր հանդիպումներուն ընթացքին յստակօրէն կ'արտայայտուէին, թէ իրենք քաջ գիտեն, թէ ո՛վ է խախտողը զինագագարը: Միջազգային գետնի վրայ մենք դիմեցինք եԱՀԿ-ի (OSCE-ի) բոլոր գեսպանատուններուն, որպէսզի իրենք ալ իրենց կարգին խստօրէն գատապարտեն: Այս ծիրէն ներս նուսիոյ, Ֆրանսայի եւ Ամերիկայի գեսպանատուններուն դիմեցինք եւ հանդիպում ունեցանք իրենց ներկայացուցիչներուն հետ:

Ներազգային իմաստով զօրակցական հաւաքներ կազմակերպուեցան կերպուններուն մէջ, նախ որպէսզի մեր ժողովուրդը իրագեկ պահենք իրադարձութիւններուն՝ ճշգրիտ տեղեկութիւնները փոխանցելով, ապա եւ ժողովուրդին արամագրութիւնները բարձր պահենք համար՝ թէ հոս, թէ հոն, անհրաժեշտ էր Արցախի ժողովուրդին զգալը, թէ Ափիւռքի

իրենց քոյրերն ու եղբայրները իրենց հետ են: Միեւնոյն ժամանակ նիւթական դրամահաւաք տեղի ունեցաւ, որ այս պարագային ՀՕՄ-ի միջոցով փոխանցուեցաւ առ որ անկ է՝ պատերազմին պատճառած վնասներու հատուցման եւ յառաջիկայի նման դէպքերու առաջքը առնելու համար: Կարեւորութեամբ կ'ուզեմ շեշտել, որ մեր ժողովուրդը սիրով ընդպատճեց, եւ Արցախի քաղաքագիտական նոր օրին յայտարարուեցաւ, որ 100 հազար տողարէն աւելի գումար տրամադրուեցաւ:

Ապագայի հարցով շատ զգոյշ ենք, որովհետեւ դէպքերը կրնան կրկնուիլ. սահմանին վրայ դիտարկման ելեկտրական սարքաւորումներու օգտագործման հարցով աշխատանք կը տանինք, որ Գանատան ալ իր կարգին ԵԱՀԿ-ի բարեկամ երկիրներու միջոցով ճնշում բանեցնէ, որ այդ ծրագիրը որդեգրուի: Գիտենք, որ Ասրպէյնան կը մերժէ, որովհետեւ ելեկտրագումային այդ սարքերը օգտագործելու պարագային սահմանը ճշգրւած կ'ըլլայ:

Հ.- Ինչպէ՞ս կ'արժեւորէ Գանատայի հայ գաղութին ներկայ իրավիճակը եւ ի՞նչ նոր ծրագիրներ ունի կուսակցութեան Գանատայի կառոյցը հայրենիի մէջ:

Ո.Տ.- Սկսինք նախ գանատական դիտանկիւնէն. Գանատայի մեր գաղութը մեծ աճ կ'արձանագրէ, վերջին շրջանին մեր հաշուարկով Գանատան հաստատուած են 5-10 հազար ներգաղղողներ գանազան հայկական գաղղութներէ, մեծ մասը՝ մօտառարայէս 5 հազարը, սուրիահայ ընտանիքներ են: Եւ որպէս հայախօս գաղութ՝ Գանատան այսպիսով կը դառնայ Սփիւռքի ամէնէն կայուն կուտաններէն մէկը: Կազմակերպուած գաղութ է՝ իր կերպոններով, գարույներով եւ կառոյցներով, որքան ալ կը փորձէ համակերպի գանատական մեծ ընկերութեան, նոյնքան նաեւ կը պահէ իր հայկական դիմագիծն ու մշակոյթը: Մեր տուեալներով յառաջիկային ներհոսքը պիտի շարունակուի, ուրեմն հարկ է այս նոր եկողները ներառնել մեր կառուցներէն ներս, որպէսզի համախմբուին եւ ընդգրկուին մեր տանելիք ներկայի եւ ապագայի ծրագիրներուն մէջ: Ուրեմն որպէս հաստատուած, կազմակերպուած եւ աճող գաղութ ներդրում պիտի ունենայ նաեւ մեր հայրենիքի կեանքէն ներս, պիտի օժանդակէ Հայաստանի, Արցախի, Ջաւախիքի եւ ուր որ հայեր օժանդակութեան պէտք ունին, ինչպէս որ պատահեցաւ սուրիահայութեան պարագային:

Գալով մեր կառոյցի հայրենիքի մէջ ծրագիրներուն, համահայկական առումով մեր կուսակցութիւնը աշխատանքները բաժնած է, եւ Գանատայի բաժնին ինկած է օժանդակել Լոռի մարզին, որ բնակչութեամբ երկրորդն է մեր մարզերուն: Ուրեմն այս աշխատանքներու ծիրէն ներս արդէն 4-5 տարի է, որ կ'իրագործուի Վանաձորի տարեկան ճամբարը: Այս մէկը օգտակար է նախ մեր երիտասարդութեան, որոնք կ'երթան եւ կը տեսնեն հայրենի ժողովուրդին իրավիճակը՝ իր լաւ եւ վատ կողմերով, միւս կողմէ Վանաձորի մեր նոր սերունդին համար կ'իրագործեն դաստիարակչական սերտուած եւ նապատակառութեան ծրագիրը: Այս աշխատանքը պիտի շարունակուի եւ զարգանայ:

Մենք նաեւ լուրջ ծրագիրներ ունինք Լոռի մարզին մէջ, պիտի նորոգենք կարգ մը կեղրոններ Ստեփանաւան եւ Ալավերդի քաղաքներուն մէջ եւս, որպէսզի Լոռի մարզին մէջ արմատաւորուին մեր աշխատանքները եւ համագործակցաբար հոն գործող մեր կառոյցի ընկեր-ընկերութիւններուն հետ՝ պիտի հաստատուին ՀՅԴ պատանեկան, երիտասարդական եւ ուսանողական մասնաճիւղեր:

**Այս էք կը հովանաւորեն Ա. և Ա. Գրիգոր և Արցախի Շիրիլեան**

**THINK MAZDA... THINK GABRIEL...**

**2016.5  
MAZDA CX-5**



Image for illustration purposes only.

**mazda**  
**GABRIEL**  
**ST-LAURENT**

5805, route Transcanadienne  
St-Laurent, QC H4T 1A1  
514 256-7777  
[mazdagabrielstlaurent.com](http://mazdagabrielstlaurent.com)



**Tania Bewadekian**  
General Manager

**PROUDLY SERVING  
THE  
ARMENIAN COMMUNITY**

**◀ OPEN SATURDAYS ▶**

**UNLIMITED  
MILEAGE WARRANTY**

BEST NEW-VEHICLE WARRANTY IN THE INDUSTRY  
STANDARD ON ALL 2015 AND LATER MODELS

**ZOOM-ZOOM**

For more information, visit Mazda Gabriel St-Laurent and Mazda Gabriel St-Jacques.



# «Իմ երաժշտութեան հիմքում միշտ հայկական է, որովհետեւ դրանք իմ արմատներն են». Սիրուշօ

- «Հորիզոն»-ի ընթերցողների հիւրն է Հայաստանի նորանկախ Հանրապետութեան լաւագոյն եւ ամենատաղանդաւոր արուեստագէտներից մէկը՝ բոլորիս ծանօթ երգչուիի Սիրուշօն։ Յարգելի՛ Սիրուշօ, Զեր նոր ձայնակաւառակը կոչւում է «Արմատ», ինչո՞ւ։

- Ողեշնչումների կուտակում է մէկ ձայնասկաւառակի մէջ եւ վերնագրուած՝ «Արմատ», որովհետեւ երգերի մեծ մասը հայկական ծագում ունեն եւ ներառում են հայկական ոփթմեր, թեմաներ, մոթիֆներ, գոյներ եւ պատկերներ։ Ասել է թէ, ձայնասկաւառակում ամփոփուած են տարբեր զգացողութիւններ, որոնք այդ շրջանում ինձ յուղել են։ Մի թեման պատկերում է քրիստոնեայ հային, միւսը՝ ֆիտայական ոգու մասին է, յաջորդը ներկայացնում է Տէր Զօրի ճանապարհը, այսինքն՝ Յեղասպանութիւնը, որը մեծ դեր ունի մեր կեանքում, միւսը՝ հատուած է «Սասնայ ծուեր» էպոսից, որի միջոցով փորձել եմ ցոյց տալ հայ մարդու անպարտ ոգին, հատուած կայ նաեւ Սայաթ-Նովայի խօսքերով եւ այլն։

- Զեր վերշին տեսահոլովակը քիտայապետ Մախ-լուտոյի մասին է։ Գաղափարն ինչպէ՞ս ծնուեց։

- Յանկանում էին անդրադառնալ ֆիտայիներից մէկին, մեր հերոսներին եւ ներկայացնել այնպիսի անուն, որը շատ չի հնչել։ Այսօր երիտասարդները ճանաչում են Անդրանիկին, Արաբոյին, Գէորգ Չառչին, սակայն Մախլուտոյի անունը քիչ է յայտնի։ Յիշում եմ, երբ տեսահոլովակը ցուցադրուեց, մեզ շատերն էին հարցնում, թէ ո՞վ է Մախլուտոն։ Իսկ Մախլուտոն այն մարդն է, որը Անդրանիկի կողքին է կռուել, մասնակցել բազում մարտերի։

Մախլուտոյին նուիրուած երգի խօսքերի հեղինակ Մուրաս Մշեցու հետ, որն այդ թեմայով շատ ստեղծագործութիւններ ունի գրուած, քննարկում էինք, թէ ո՞ւմ մասին կարելի է երգել։ Երբ ընարութիւնը կանգ առաւ Մախլուտոյի վրայ, նա ասաց, որ Մախլուտո անունը երգեցիկ չէ, ես պատասխանեցի՝ փորձենք այնպէս անել, որ հնչի, ինչն էլ առիթ կը լինի մէկ անգամ եւս յիշեցնելու Մախլուտոյի մասին։ Միաժամանակ մեր կայքէներում տեղեկութիւններ հրապարակեցինք, որպէսզի երիտասարդները տեղականանան, թէ ո՞վ է Մախլուտոն։

- Այժմ փորձենիք յետադարձ ակնարկ կատարել դէպի անցեալ։ Ի՞նչ յիշողութիւններ ունեք Եւրատեսիլիեան Զեր փորձառութիւնից։

- Եւրատեսիլն իմ կեանքում շատ կարեւոր դերակատարում ունեցաւ, որովհետեւ մեծացրեց լսարանս, տուեց շատ հանդիսատես, օգնեց, որ հայ երգը կարողանամ տարածել տարբեր երկրներում եւ ո՞չ միայն հայերի շրջանակում։ Ուրախ եմ, որ այդ ամէնք նաեւ շարունակական եղաւ։ Եւրատեսիլից յետոյ հիւրախաղեր ունեցայ աշխարհի տարբեր երկրներում, ելոյթ ունցայ հայ եւ ոչ հայ հանդիսատեսի առջեւ, ինչը նաեւ մեծ փորձ էր ինձ համար։

- Սիրուշօն ի՞նչ կարծիք ունի Հայաստանի արդի հայ երաժշտութեան, որը երաժշտութեան մասին, որը շատ յա-



նախ ներկայացնում են՝ միաձուլելով գուսանական կամ տոհմիկ, գաւառական հայ երգը։

- Անկեղծ կը լինեմ. չեմ կարծում, որ այսօր ժամանակակից երաժշտութիւնը լաւ վիճակում է։ Ունենք լաւ երգիշներ՝ լաւ ձայնային տուեալներով, սակայն երաժշտութիւնը լաւ դիրքերում չէ։ Երեւել պատճառներից մէկն էլ, որ ցանկութիւն առաջացաւ հայկականը ներկայացնել, սա էլ, որովհետեւ տեսայ, որ այն երաժշտութիւնը, որը հնչում է այսօր, հայկականի հետ որեւէ ընդհանրութիւն չունի։

- Սկսել էֆ երգել, Զեր սէրը արտայայտել երաժշտութեան հանդէպ դեռ մանուկ հասակից։ Ի՞նչն է Զեր մղել, որ ուղղուէք դէպի երաժշտական արուեստը եւ ո՞ւմ երաժշտութիւնն է Զեզ վրայ խոր տպաւորութիւն գործել։

- Մեծացել եմ այնպիսի ընտանիքում, որտեղ արուեստը, մշակոյթը առաջնային էին։ Մայրս, հայրս լաւագոյն օրինակներն են ինձ համար։ Ես մեծացել եմ մօրս երգերի ներքոյ։ Իսկ երգչուհի դառնալը ակամայ է եղել, շատ բնական, կարծես այդպիս էլ պէտք էլինէր։ Երկու տարեկանից սկսել եմ

*Կայ էք կը հովանաւորեն Ա. և Ա. Ղահել և Կապովիկ Անդրունեան*



երգել, այնուհետեւ մասնակցել եմ մօրս համերգներին: Ի դէպ, առաջին ելոյթս, առաջին բեմելս եղել է Գանատայում՝ թուրնժոյում. ես 7-8 տարեկան էի: Մօրս համերգի ընթացքում մի քանի երգ երգեցի, այդտեղից էլ ամէն ինչ սկսուեց ու շարունակում է առ այսօր:

Ինչ վերաբերում է արտասահմանեան երգիչներին, ապա լսել եմ Սթիվ Ռուանդեր, Բրայեն Մըքնայդ, Ռէյ Ջարլզ: Ի դէպ, սկսել եմ երգել գասական երաժշտութիւնից: Բայց ինձ համար շատ թանկ էր մօրս այդ ժամանակուայ ձայներիցի երգերը, որոնք առ այսօր լսում եմ: Երգեր, որոնք ինձ դուր էին գալիս շատ փոքր տարիքում, շարունակում են դուր գալ նաև այսօր:

- Սիրուշոյի համար ի՞նչ է հայրենիք, այսօրուայ հայրենիք:

- Շատերն են սիրում եթերով խօսել հայրենիք ու հայրենասիրութեան մասին, ինչն ինձ երբեք դուր չի եկել: Կան բաներ, որոնք դու սիրում ես ինքդ քո մէջ, լսելեայն: Ես պարբերաբար հայկական թեմաներով աշխատանքներ եմ կատարում: Եւ չեմ սիրում դա որպէս դրօշակ օգտագործել ու խօսել հայրենասիրութեան մասին, թէ տեսէք՝ ես ամենահայրենասէրն եմ: Հայրենասէք են այնքանով, որքանով են: Այդ ամէնն արտայատում է մեր աշխատանքի մէջ:

Ես օրինակ, ստեղծում եմ այնպիսի երաժշտութիւն, հայկական երաժշտութիւն, որը երիտասարդներ կարող են լսել: Ստեղծում եմ նաեւ հայկական ոճով զարդեր, որոնք իմ պատկերացմամբ հայ երիտասարդները կարող են կրել:

Անկախ ինձանից, հայկականն իմ աշխատանքներում շատ է: Եւ որքան էլ փորձենք՝ չենք կարող հեռու փախչել այդ ամէնից, որովհետեւ այդ զգացողութիւնը միշտ եղել է եւ կը լինի: Դա վորքը պետութիւններին, գժուարութիւններ տեսած ժողովրդին բնորոշ յատկութիւն է. անընդհատ մերը ցու-

ցադրել, առւելի ճանաչելի դարձնել: Զգտում, որն իմ մէջ էլ կայ եւ դարձել է նպատակային՝ հնարաւորինս շատ տարածել հայկականը, հայկական մշակոյթը:

- Սիրուշո՛, չզարմանա՞վ, երբ Գանատայում կամ Ամերիկայում Զեր համերգների ժամանակ 13-15 տարեկան պատանիները ծայնակցին Զեզ ու երգեն Զեր երգերը՝ «Քելէ, ֆելէ», «Պոէ գոմէշ»: Նրանք ոչ միայն գիտեն այդ երգերը, այլև տարածում են միմեանց մէջ: Հասկանալի է, երգի յաջողութեան գիխաւոր բանալին երգիչն է, բայց կան նրա կողքին աշխատող մարդիկ, որոնք գործիքաւորում են երգերը: Ում հետ էք Դուք համագրծակցում:

- Աշխատում եմ տարբեր մարդկանց հետ, փորձում եմ իւրաքանչիւր նախագծում ներգրաւել հնարաւորինս տաղանդաւոր հայերի: Բայց ձայնասկաւառակների, տեսահոլովակների, իմ բեմական կերպարների պատրաստմամբ (փրոտարգչնով) հիմնականում զբաղւում եմ ինքս: Շատ հարցերում խորհրդակցում եմ մօրս, հօրս հետ, բայց, այնուամենայնիւ, երաժշտական արտադրանքն իմ մտայլացումներն են, որոնք տարիներ շարունակ կուտակուելով իմ մէջ՝ վերածում են երգի, տեսահոլովակի: Օրինակ՝ «Արմատ» ձայնասկաւառակում շատ երգեր ստեղծուել են պարզ ոիթմերից, հայկական տհոլի եւ կոպալի հնչեցրած ոիթմերից, որոնց հիմքի վրայ արդէն ստեղծուել է երգը՝ երաժշտութեամբ եւ խօսքերով:

Բայց անկախ այս ամէնից, փորձում եմ աշխատել տաղանդաւոր մարդկանց հետ ո՛չ միայն Հայաստանում ապրող, այլեւ՝ Սփիւրքում, որտեղ շատ շնորհալի մարդիկ կան, որոնց Հայաստանում չեն ճանաչում: Իմ կարծիքով որքան շատ լինի նմանօրինակ համագործակցութիւնը, այնքան աւելի հետաքրքիր նախագծեր կեանքի կը կոչուեն:

- Սիրուշո՛, Դուք խօսեցիք ոիթմի մասին: Երաժ-

*Միա էք կը հովանաւորին Ա. և Ա. Իրավ եւ Անահ Անդրագիտնեան*

տուրեան մէջ ոիթմի կարեւորութիւնն առաջին անգամ շեշտել են Փիքը Կապրիկը եւ իր գործընկեր Ֆոլինը: Ինչո՞ւ էֆ կարեւորում ոիթմը երգի մէջ:

- Ոիթմը, յատկապէս այսօր, շատ կարեւոր է: Խօսքերիս վառ ապացոյցը թերեւս այն է, որ այսօր տիմէյները դարձել են աւելի ճանաչուած քան երգիչները, կատարողները: Սա նշանակում է, որ ոիթմերը եկել են գրաւելու աշխարհը եւ մարդկանց ուշադրութիւնը:

Իմ կարծիքով, մենք ունենք հայկական ոիթմեր, որոնք թերեւս շատ տարածուած չեն, բայց կարող են հետաքրքիր լինել աշխարհին: Այս ոիթմերը, որոնք հոգեհարազատ են մեզ՝ հայերիս, հնարաւոր կը լինի նաեւ լսելի դարձնել ամբողջ աշխարհին:

- Այսինքն, Դուք հաստատում էք, որ հայկական երաժշտութիւնը հարուստ է ոիթմերով:

- Միանշանակ, թէեւ այսօրուայ հասարակութեան մեծ մասն այդ մասին չգիտի: Եթէ գիտի էլ, ապա չի պատկերացնում, թէ ինչ հարուստ ոիթմիկ պատկերներ ունենք, որոնք շատ հետաքրիլ են, տարբերուող, ինչ-որ բան թելադրող:

Ինչպէս ասացի, «Արմատ» ձայնասկաւառակի աշխատանքները սկսուել են ոիթմերից՝ յատկապէս տհոլի:

- Ինչպէ՞ս է Սիրուշօն համերգների ժամանակ ստեղծում կապը հանդիսատեսի հետ:

- Դա ինքը ստիճանքեան է ստեղծում, յատուկ որեւէ բան չեմ անում: Եւ զամի կախարդական կապ է, որը համերգների ժամանակ ստեղծում է իմ եւ իմ հանդիսատեսի միջեւ: Պետք է դահլիճում լինել, որ այդ ամէնը կարողանաք զգալ: Համերգային մի քանի ժամն ինձ համար իրականում աւելին է, անմոռանալի: Տարօրինակ էներգետիկա, որը ես փոխանցում եմ հանդիսատեսին, իսկ նրանք՝ ինձ: Ողջ համերգի ժամանակ մենք միաւորում ենք եւ դառնում մէկ ամբողջութիւն:

- Սիրուշօ՛, վստահ եմ, կարող եմ նաեւ հաստատել, որ գանատահայերն անհամբեր սպասում են, որ համերգային շրջագայութեան ժամանակ՝ կ'այցելիք նաեւ Գանատա:

- Ես էլ մեծ յոյս ունեմ: Գանատան ինձ համար շատ հոգեհարազատ է, եւ մեծ տեղ ունի իմ կեանքում: Կեանքիս երկու տարին անցկացրել եմ թորոնթոյում, ունեցել երկու համերգ: Առաջին համերգի ժամանակ, ինչպէս ասացի, շատ փոքր էի, իսկ երկրորդ համերգից արդէն շատ տարիներ են անցել:

Գիտէք, ինձ շատ են հարցնում, թէ «Արմատ» ձայնասկաւառակի ոգեշնչման աղբիւրը ո՞ր էն է, ինչո՞ւ եմ ընտրել հայկական թեմաներ: Նշեմ, որ մեծ գեր ունի Սիրուշը: Որոշ ժամանակ ասպեկտ եմ Գանատայում, մօրս հետ հիւրախաղերի եմ մեկնել 30-ից աւելի երկրներ, յետագայում արդէն ինքս եմ մենահամերգներ ունեցել: Շփումը Սիրուշի հետ թողել է այնպիսի պղեցութիւն, որ ես, ապրելով Հայաստանում, միեւնոյնն է, ունեմ սփիւռքահայերին բնորոշ կարօտ, հետաքրքրութիւն, սկը հայկականի հանդէպ, որը տարբերուող է:

Շատ ընկերներ ունեմ Լիքանանում, Ամերիկայում, որոնց հետ տարիներ շարունակ շփուելով՝ տեսել եմ նրանց կարօտ, սկը հայկական ամենափոքր առարկայի, ամենապարզ ու հասարակ իրերի, երաժշտութեան հանդէպ: Շփուելով նրանց հետ՝ ես էլ եմ վարակուել այդ զգացողութեամբ:

- Յարգելի՛ Սիրուշօ, երաժշտութեանը զուգահեռ, Դուք ընտրել էք նաեւ զարդերի աշխարհը: Ինչպէ՞ս են ծնուռում Զեր հեղինակած զարդերը:

- Նոյն կերպ, ինչպէս եւ ստեղծուում են իմ երգերը: Ինչպէս ասացի, կան շատ ոիթմեր, հայկական մեղեղիներ, որոնք օգտագործուած չեն: Այդ նոյն տրամաբանութեամբ կան նաեւ շատ հայկական գեղեցիկ զարդեր, որոնք այսօր մուացուած են, լայն տարածում չունեն, չեն օգտագործուում: Մարդիկ գիտեն միայն մի քանի զարդանախչեր, որոնք եւ փորձում են զարդի վերածել ու կրել:

Մենք փորձում ենք ներկայացնել հայկական զարդերը նոր չնչով, նոր ոգով: Այցելում ենք տարբեր թանգարաններ, ընտրում լաւագոյն նմոյշները, աշխատում ենք լաւագոյն վարպետների, արծաթագործների հետ, որպէսզի ստեղծենք այնպիսի նմոյշներ, որոնք ներկայանալի կը լինեն ամբողջ աշխարհի համար:

Իմ կարծիքով հայ կանայք էլ աւելի գեղեցիկ են դառնում, երբ իրենց հագուստի հետ համադրում են հայկական զարդեր, հայկական որեւէ գեղթալ: Այս պարագայում կնոջ ոճ կապ չունի: Ուրախ եմ, որ այսօր Հայաստանում շատ են այն աղջիկները, որոնք կրում են հայկական զարդեր:

Վերջին շրջանում մեր կայքի միջոցով հնարաւորութիւն ունենք ներկայացներու նաեւ հայ արուեստագէտների աշխատանքները, որոնք ստեղծագործում են հայկական ոճում: Վերջերս, օրինակ, սկսել ենք համագործակցել «Շարան» կազմակերպութեան հետ, որը ձեռագործ աշխատանքներ է կատարում:

Այս ամէնի նպատակն է, որ այն մարդիկ, որոնք հեռու են Հայաստանից, կարողանան օն-լայն գնումներ կատարել օրինակ՝ Վերնիսաժից: Մեր կայքում ներկայացնում ենք նաեւ Վերնիսաժում վաճառուող արուեստի լաւագոյն նմոյշները: Այս կերպ, մենք հնարաւորութիւն ենք տալիս մեր վարպետներին գուրս գալ միջազգային շուկայ, իսկ մեր հայրենակիցներին՝ օգտուել հայկական արտադրանքից:

- Սիրուշօ՛, «Հորիզոն»-ը արուեստագէտների հետ զրոյց-հանդիպումները եղանակում է հետեւեալ կերպ: Զեր մէկ բառ ենք ասելու, որը Դուք, Զեր հայեցողութեամբ, պէտք է փորձեք բացատրել մի բանի բառերով: Առաջին բառն է՝

- հայրենիք:

- Ցաւ, ձգտում, յոյս, լաւատեսութիւն:

- Ընտանիք:

- Հանգստութիւն, ձգտում, նուածում:

- Սասուն:

- Պար, եռանդ, տաքութիւն, ոգի, պատմութիւն:

- Երգ:

- Խաղաղութիւն, պայքար, կոիւ, հանգստութիւն, խօսքը հասցնելու միջոց, մարդու անբաժանելի մաս:

- Կեան:

- Ժամանակ:

- Շնորհակալութիւն, Սիրուշօ, մենք Զեր սպասում ենք Գանատայում:

Հարցազրոյցը վարեց Վահագն Գարագաշեան

*Կայսէր կը հովանաւորեմ Առ և Առ Կանքրամիկ եւ Արքա Քահանարութեան*



- Pick up & drop off
- Grooming

- Daycare
- Long-term



[Facebook](#) [Instagram](#) @beverlyhillsdoggiehotel

## Experience luxury with THE ULTIMATE BEVERLY HILLS PACKAGE

### What you get Monthly

- Unlimited Day Care Any Day of the Week
- One Overnight Stay
- One Spa Session (bath+manicure)

### «Prince or Princess for the Month»

ONLY \$395!!

daycare for as low as \$13/day



Ծովականացներու աշխերը լոյս

Լաւ լուր շուն ունեցողներուն

Ծովականացներու յատուկ պատսպարան-պանդոկը արդին իսկ բացուած է եւ կը գործէ: Մեզի յանձնելով ձեր շուները կրնաք հանգիստ մտքով արձակուրդի մեկնիլ կամ այցելութիւններու երթայ:

Ձեր շուներուն հոգատարութիւնը կը ստանձնեն մասնագետներ:

Որոնք կը խնամեն եւ կը կերպարեն ձեր շուները՝ ձեր փափաքին համաձայն:

Պատրաստ ենք ձեր շուներուն մազերը կտրելու, եղուսկները ձեւարելու, լոգցնելու եւ այլն...:

Մանրամասնութիւններու համար դիմուլ՝



1396 Don Mills Rd. Unit 31 Toronto ON M3B 0A7

416.510.2434

[www.beverlyhillsdoggiehotel.com](http://www.beverlyhillsdoggiehotel.com)

[Facebook](#) [Instagram](#) @beverlyhillsdoggiehotel

# Հարցազրուց պոլսահայ երգահան Մաժակ Թօշիկեանի հետ

## «Կոչ կ'ուղեմ Մոնթրէալի բոլոր հայկական կազմակերպութիւններուն եւ երգիշներուն, որ միանան մեզի յանուն Հրանդ Տիկիքի արդար դատին»

Սեպտեմբեր 28-ին «Հորիզոն» յի խմբագրասուն այցելեց պոլսահայ երգահան Մաժակ Թօշիկեան, որուն հետ ունեցանք շահեկան զրոյց մը: Ստորև հարցազրոյցը:

**Հ.- Խնդրեմ նախ ներկայացուցել դուք ձեզ:**

**Մ.Թ.- Մաժակ Թօշիկեան, պոլսեցի երգահան եմ: Կը զբաղիմ երգերու երաժշտութեանց յօրինմամբ եւ համակարգումով: Պոլսոյ մէջ թուրք երգիչներու համար մօտաւորապէս 350-400 գործ յօրինած եմ: 1981-ին հաստառուեցայ Գանատա, հոս աւելի ազատ մթնոլորտի մէջ կրցայ գործել որպէս հայ եւ սկսայ հայերէն երգերով զբաղիլ: Մօտաւորապէս 30 հայերէն երգունիմ երգչախումբերու, երգիչ-երգչունիներու համար պատրաստուած, որոնցմէ ամենէն նշանաւորներն են «Տեսնեմ Անին ու մեռնեմ» եւ «Քո հայրենիք» երգերը: Զանազան պարգեւատումներու արժանացած եմ, որոնցմէ ամենէն յատկաշնականն է ՀՀ Սփիւրքի նախարար Հրանոյշ Ցակորենի կողմէ տրուած «Կոմիտաս»ի շքաշնանը՝ հայ երգին եւ երաժշտութեան ասպարէցին մէջ իմ ունեցած ներդրումին համար: Վերջին տարիներուն Օրաթորիոյի մը ստեղծման ծրագիրը յղացայ եւ առաջին գործս եղաւ «Դարէ դար Աղթամար» օրաթորիոն, որ Պոլսոյ «Մարմարա» լրագրականին 70-ամեակին ներկայացուեցաւ: Անէն ետք, երբ սպաննուեցաւ Հրանդ Տիկնք, որ իմ մտերիմ բարեկամս էր, պարտք զգացի ձեւով մը ներկայացնել իր կեանքն ու ողբերգական մահը: Հետեւաբար յօրինեցի «Հրանդ Տիկնք» օրաթորիոն, որ շատ մեծ արձագանդ գտաւ:**

**Հ.- Ի՞նչ էր ձեր դրդապատճառն ու ներշնչման աղբիւրը այս օրաբոր-**

իոյի յօրինումին:

**Մ.Թ.- Եթէ Հրանդը ճանչանայիք այս հարցումին պատասխանը ստացած կ'ըլլայիք: Հրանդը նախ բարին բուն իմաստով «Մարդ» էր: Հրաշալի անհատականութեան տէր, բարեսիրտ, եւ իսկական հայ: Իր սպանութենէն երկու շաբաթ առաջ հետն էի, «Ակոս»ի խմբագրատան մէջ: Այսինքն Հրանդը ճանչցող իւրաքանչիւր հայ պարտք կը զգայ իր բաժինը բերելու յանուն Հրանդին: Եթէ լրագրող է՝ ապա իր մասին կը գրէ, եթէ մարզիկ է՝ իր տարած յաղթանակներէն մէկը Հրանդի նահատակութեան կը նուիրէ, եթէ արուեստագիտ է՝ զինք յաւերժացնող արուեստի գործ մը կը ստեղծագործէ եւ այլն: Իսկ ես, երաժիշտ ըլլալով իր յիշատակը անմահացնելու համար յօրինեցի այս աշխատութիւնը, որպէսզի դալիք սերունդները ձեւով մը յիշեն զինք: Ներշնչումս ուրեմն ինքը Հրանդ Տիկնք էր: Բոլորս պարտական ենք Հրանդին եւ անհատապէս, եւ որպէս ազգ, իմ բաժին պարտքս ալ այս յօրինումը եղաւ:**

**Հ.- Ի՞նչ դժուարութիւններ եւ խոչնդուններ ունեիք այս օրաբորիոյի ստեղծման ժամանակ:**

**Մ.Թ.- Առաջին դժուարութիւնը անշուշտ այն էր, որ մեր ապրած երկրին մէջ, այսինքն՝ Պոլսոյ մէջ, ի՞նչ ձեւով կրնայ ընկալուիլ այսպիսի նախաճեռնութիւն մը, դրակա՞ն թէ ժխտական: Հրանդին հարցով շատ լաւատես էի, որովհետեւ ոչ մէկ քաղաքական գործիչ իր հասցէին ժխտական արտայայտութիւն ունեցած է Պոլսոյ մէջ: Բոլորս գիտենք, որ իր սպանութեան պատճառով արար աշխարհ ոտքի ելաւ, եւ Պոլսոյ մէջ 15000-20000 հոգի մասնակցեցաւ իր թաղման արարողութեան: Այս բոլորը ենթադրել կու տայ, որ վտանգ պէտք չէ սպառնար մեզի: Սակայն միշտ ալ առկայ է վտանգը թուրքիոյ:**



**մէջ: Պոլսոյ ելոյթին չափազանց ջղային էի, ամէն վայրկեան անակնկալ ներխուժումի մը ենթադրութիւնը ունէինք: Բարեկախտաբար 1700 հանդիսատեսի ներկայութեամբ ելոյթը շատ յաջող ընթացաւ:**

**Հ.- Որքա՞ն տեսեց այս աշխատութեան պատրաստութիւնը եւ ինչ-պէ՞ս իրականացան ելոյթները:**

**Մ.Թ.- Մօտաւորապէս երկու տարի տեսեց: Նախ ես երաժշտութիւնները յօրինեցի, ապա նախակրթաբարանի իմ գասրնկերուհիս եղած Պերճուհի Պէրպէրեանէն խնդրեցի, որ գրէ բառերը, որովհետեւ Պերճուհին արդէն «Ակոս» թերթի աշխատակից է, որպէս գրող: Երբ իրեն դիմեցի եւ բացարեցի մտադրութիւնս, ան Հրանդը լաւ ճանչցող մը ըլլալով կրցաւ ճշգրիտ ձեւով զգա-**

*Այս էքը կը հովանաւորեն ԱՌ. և ԱՌ. Դավագրէթ և Հորի Դավագրեան*

# Hrant Dink - Oratorio Contemporain

Organisé par la Fondation Bolsahay pour le 50<sup>e</sup> anniversaire de S.A.I.



**Majak Tosikyan**

Compositeur



**Bercuhi Berberryan**

Paroles



**Bogos Yegyazar**

Solist / Yerevan



**Elie Berberian**

Solist / Montréal



**Karin Cubukcuyan Bozkurt**

Solist / Istanbul



**Lori Antounian**

Chef d'orchestre / Montréal

Orchestre Impérial  
et Arden Arapyan

## YEREVAN

## ISTANBUL

## LOS ANGELES

## MONTRÉAL

Avec la participation de



La chorale Knar-Hamazkayin  
et les Amis de Hrant

**Samedi le 18 mars 2017 à 20h00 - Dimanche 19 mars 2017 à 19h00**

Première Église Évangélique Arménienne

11455 rue Drouart, Montréal, Québec H3M 2S6

**Billets en vente au 514.337.0831 & 514.473.3031**

ցումներս դրսեւորել: Անկէ ետք երգչախումբին քառաձայն համակարգումը ըրի: Երգչախումբ ապահովելու հարցով դիմեցի իմ շատ սիրելի բարեկամներէս խմբավար Յակոբ Մամիկոնեանին, ան սիրով ընդառաջեց առաջարկիս եւ իր «Լուսաւորիչ» երգչախումբը փորձերու սկսաւ մեծ խանդավառութեամբ: Երիտասարդները շատ սիրեցին այս օրաթորիօն, որովհետեւ ժամանակակից ձեւով մշակած եմ զայն:

Հակառակ Պոլսոյ մէջ փորձեր կայացնելու լուրջ դժուարութիւններուն, յաջողութեամբ կրցանք յաղթահարել այդ բոլորը: Նշեմ, որ այս աշխատութիւնը գրուեցաւ նախ թրքերէնով: Հաւանաբար այս մէկը ձեզի տարօրինակ թուի, բայց Հրանդին ո՛վ ըլլալը նախ թուրքերուն պէտք էր ներկայացնել: Դժբախտաբար չկրցանք ելոյթը իրականացնել Պոլսոյ մէջ, շատեր խանդավառուեցան եւ փափաքեցան որդեգրել զայն, սակայն որոշ հասկնալի վերապահութիւններու պատճառով չկրցան ընդառաջել այս նախաձեռնութեան, որուն համար իրաւունք ալ ունին: ՀՀ Սփիւռքի նախարարուհի Հրանդոյշ Յակոբեան նամակով մը խնդրեց ինձմէ, որ իմ աշխատութիւններս ներկայացնող ելոյթը մը ունենամ Հայաստանի մէջ, միջոցին խնդրեց նաեւ «Հրանդ Տինք»ին օրաթորիոյին ալ անդրանիկ ելոյթը կայացնել Երևանի մէջ: Անշուշտ շատ խանդավառուեցայ, սակայն այս պարագային լուրջ մտահոգութիւն մը ծագեցաւ. ամբողջ օրաթորիոն Հայերէնով գրելու հարցը: Շուտով Պերճուհին ընդառաջեց եւ կրկին լուրջ եւ տքնաջան աշխատանքէ ետք իրագործեցինք: Հայոց ցեղասպանութեան 100-ամեակին մեծ յաջողութեամբ տեղի ունեցաւ անդրանիկ ելոյթը «Արամ Խաչատուրեան» շքեղ սրահին մէջ: Ներկայացման առաջին բաժինով իմ յօրինած զանազան երգերս հնչեցին, որուն համար Պոլսէն Սիսիլը, Պարթեւը եւ ուրիշ երգիչներ ալ եկած էին: Երկրորդ բաժինով ներկայացուեցաւ Հրանդ Տինքի օրաթորիոն, որուն աւարտին նախարար Հրանդոյշ Յակոբեան կրկին պարգեւատրեց զիս ոսկեզօծ վահանակով մը: Անդրանիկ ելոյթին յաջորդեց Պոլսոյ Մսիփթարեան Վարժարանէն շրջանաւարտ եղած խումբ մը երիտասարդներու կազմակերպութեամբ (Գիտէք երիտասարդները աւելի անվախ եւ տաքարիւն կ'ըլլան) Պոլսոյ ելոյթը:



Նշեմ, որ երկու ելոյթներուն հովանաւորն էր պղոսահայ մեկենաս Տիգրան Կիւլմէզկիլ: Պոլսոյ ելոյթէն ամիս մը ետք Լոս Անձելըսի մէջ կրկնուեցաւ բաւական յաջող ելոյթը, աջակցութեամբ Յովնան Սրբազնին եւ Ստեփան Կէօփիւմեանին: Նիւ եորքի մէջ պիտի ունեանք մեր յաջորդ ելոյթը: Ապա շնորհիւ Ոսկան Հազարապէտեանին եւ Պոլսահայ միութեան, որոնց չափագանց շնորհակալ եմ, ծրագրած ենք Մոնթրէալի մէջ եւս իրականացնել սոյն ելոյթը: Աշխատութիւնը բաւական մեծ է եւ կարիքը ունինք մեծ աշխատակագմի, հետեւաբար անմիջապէս դիմեցի Համազգայինին, որոնք սիրով ընդառաջեցին, եւ տրամադրութեանս տակ դրուեցաւ Համազգայինի «Քնար» երգչախումբը իր խմբավար Լոռի Անթունեանի ղեկավարութեամբ: Լոռիին եւ Ռիթա Շամեանին հետ կ'աշխատակցիմ ներկային եւ փորձերը ընթացքի մէջ են, միեւնոյն ժամանակ նիւ եորքի մէջ տեղի կ'ունենան այնտեղի ելոյթին փորձերը: Յուսամ մոնթրէալահայութիւնը կ'ընդառաջէ եւ կ'աջակցի այս օրաթորիոյի ելոյթի յաջողութեան, որովհետեւ պէտք է վիտակցինք, որ բոլորս կ'աշխատինք Հրանդ Տինքի համար, ան սպաննուեցաւ պարզապէս հայ ըլլալուն համար եւ որուն արդարահատուցման գործընթացին մէջ ոչ մէկ առաջխաղացում կայ Թուրքիոյ մէջ 10 տարիէ ի վեր: Մոնթրէալի ելոյթը տեղի պիտի ունենայ 18-19 Մարտ 2017-ին, որմէ մէկ շաբաթ ետք՝ 26 Մարտին տեղի պիտի ունենայ նիւ եորքի ելոյթը: Այս ելոյթներուն համար խնդրեցի, որ զանազան տարիքի մասնակցողները ըլլան, «Քնար» երգչախումբի երիտասարդ երգողներուն ետին պիտի մասնակցին այլ զանազան տարիքի երգողներ՝ Հրանդին ընկերները անուան

տակ, եւ որովհետեւ Հրանդը որբ էր եւ որբանոց մեծցած էր, իր ետին պէտք է կանգնի մեր ժողովուրդը, ահա այս պատկերն է, որ պիտի ներկայացնէ երգչախումբն ու Հրանդին ընկերները:

Հ.- Ի՞նչ են ձեր յառաջիկայ ծրագիրները:

Մ.թ.- Յառաջիկայ ծրագիրս Գէորգ էմինի «Սասունցիների պարը» թատերական եւ պարային երաժշտական ելոյթի մը իրագործումը պիտի ըլլայ: Հակայական աշխատանքէ, գիտէք, սակայն մտադիր եմ ասնպայման յօրինել եւ իրագործել զայն: Եւ ինչո՞ւ չէ Մոնթրէալի մէջ ալ իրագործել անոր ելոյթը, որովհետեւ Մոնթրէալը իմ երկրորդ քաղաքս է:

Հ.- Ի՞նչ ըսելիի ունիի մոնթրէալահայութեան այս առթիւ:

Մ.թ.- Նախ կ'ուզեմ յայտնել իմ խորին շնորհակալութիւնս բոլոր այն միութիւններուն եւ անհատներուն, որոնք կ'աջակցին եւ պիտի աջակցին ինծի այս ելոյթի իրագործման աշխատանքներուն գծով: Կոչ կ'ուղեմ Մոնթրէալի բոլոր հայկական կազմակերպութիւններուն եւ երգիչներուն, որ միանան մեզի յանուն Հրանդ Տինքի արդար դատին, ո՛չ թէ յատուկ կազմակերպութեան մը համար, ո՛չ ալ Մաժակ Թօշիկեանի համար, այլ Հրանդ Տինքի արեան արդար հատուցման եւ իր դատին արար աշխարհին ներկայացման ի խնդիր:

Հարցազրոյցը վարեց  
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

*Կայսէջը կը հովանաւորեմ Զիոնի իմանալու առջական աշխատանկան կ'ըլլան*



**RE/MAX**  
RE/MAX 3000 INC.  
Agence Immobilière



**9280 L'Acadie**  
Montréal Qc. H4N 3C5

---

**Bur.: (514) 333-3000**  
**Cell.: (514) 895-5889**  
**Fax: (514) 333-6376**

Appelez-moi pour votre  
